

ԼԵՒՆ ՇԱՆԹ. ՄԵՐ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ

Հատված հեղինակի համանուն գրքից (Բոստոն, 1925թ.)

Թե՛ մեր թուական աճումի ու արժեքաւորմանը համար, թե՛ մեր հայրենիքի տնտեսական վերաշինութեանն ու բարգաւաճմանը համար, եւ թե՛ մեր հոգեկան, մտաւորական ու քաղաքակրթական բարձրացմանը համար, այսինքն՝ ազգովին ապրելու հնարաւորութիւն ունենալու համար, հայ ժողովուրդին անհրաժեշտ է *պետական անկախութիւն*: Առանց այդ անկախութեան մենք կը դառնանք վերջնապէս անհող ու անհայրենիք ժողովուրդ մը, հետզհետէ կը խաւարի ազգային ինքնութեան պէտքն ու անհրաժեշտութիւնը հայ հոգիներուն մէջ, եւ մեր գաղութային ցրիւ հատուածներն ու բեկորները պահելու ուժը, յոյսը եւ իմաստը: *Անկախութիւնը հայուն համար կեանքի դրած բացարձակ պահանջն է եւ անկախութեան ձգտումը մեր գոյութեան հիմքը, մեր լինել-չլինելու հարցը*:

Անկախութեան հասնելու անհրաժեշտութիւնը ոչ միայն մեր սեփական վիճակի ստիպողական պահանջն է, այլ եւ միեւնոյն ժամանակ անխուսափելի հարկադրութիւնն է մեր միջավայրի, մեր շրջապատի ու ժամանակի, որոնց կոչին անկարելի է ակամջ չի դնելը:

Ինչպէս տեսանք, կովկասեան մեր դրացի ժողովուրդները նոյնպէս կը ձգտին անդիմադրելի կերպով իրենց անկախութեան, եւ մեզմէ աւելի շեշտուած կերպով եւ մեզմէ աւելի փութկոտ, որովհետեւ մեզմէ աւելի կեդրոնացած են ու խիտ բնակչութեամբ եւ կրնան յենուիլ Թուրքիայի վրայ: Բայց իրենց նպատակին հասնելու ամենազլխաւոր պայմաններէն մէկը մեր բռնելիք դիրքն է. եթէ իրենց հետ ու իրենց նման չի քալենք՝ կը դառնանք չափազանց խոշոր արգելք մը անոնց համար:

Մենք ոչ միայն մեր, այլ եւ անոնց կենսական շահերուն կը հարուածենք մեր հակառակութեամբը, որովհետեւ կամքերու ու կրքերու այդ բաշխումին մէջ անկարելի է անշարժ, «խոհեմ» ու անմասնակից մնալը:

Եւ շատ իրաւացի եւ շատ բնական կերպով պիտի նկատուինք մեր դրացիներուն կողմէ իբրեւ ռուսի կողմնակից, եւ թշնամի իրենց գոյութեան ու ձգտումներուն: Եւ անոնք իրենց նպատակին հասնիլ կարողանալու համար, նախ՝ պիտի ձգտին տրորելու ու անպէտքացնելու իրենց մէջի, իրենց կողքի եւ իրենց թիկունքի թշնամին: Եւ ամէն պարտութեան ու անյաջողութեան պատճառը մեզ պիտի համարեն եւ մեզմէ պիտի հանեն

իրենց վրեժն ու ատելութիւնը. ուժեղներու դէմ լեցուած ոխն ու ատելութիւնը կը թափուի միշտ փոքրերու ու անպաշտպաններու գլխուն, հին օրէնք է: Պիտի ընեն ինչ որ իրենց ձեռքէն գայ, պէտք է խեղդեն մեզի եւ բարոյապէս, եւ տնտեսապէս, եւ ֆիզիքապէս:

Եւ մենք, որ իմաստուններու խորհուրդովը, կռիւէ խուսափելու, հանգիստ մնալու, հարստանալու եւ «բարգաւաճելու» համար հրաժարիլ կ'ուզենք մեր անկախութեան ձգտումէն, պիտի ստիպուինք շարունակ կռուելու, տուժելու եւ ցրուելու ճիշդ անոր համար, եթէ տառապիլ, հալածուիլ ու պայքարիլ չուզենանք, պէտք է ստիպուինք տառապելու, հալածուելու, փախչելու ու ջարդուելու ռուսներու տիրապետութեանը գործիք ծառայելու համար, եւ հէնց ռուսները իրենք պիտի սարքեն մորէն հայ-թաթարական ու հայ-վրացական կռուըջտուքն ու ջարդերը:

Եւ մեր այս ստորնութեան, չարչարանքին ու ծառայութեանը փոխարէն չենք ալ կրնար ակնկալել ռուսներէն անոնց յարգանքն ու բարեկամութիւնը: Քաղաքական կեանքի մէջ, ինչպէս եւ անհատական կեանքի մէջ, յարգանքն ու բարեկամութիւնը ձեռք կը բերուի, երբ արժէք մը ունիս եւ արժանապատուութիւն: Ռուսը մեզի իր հլու գործիքը դարձնելէն եւ մեզի շարունակ մեր դրացիներուն հետ կռուեցնելէն ետքը՝ հաշլեյարդարութեան վայրկեաններուն, միշտ պիտի պահէ թաթարին ու վրացիին կողմը, որովհետեւ վիրն ու թաթարը հէնց իրենց դիմադրութեամբն ու պահանջումներովը պիտի ներկայացնեն որոշ ուժ մը, որ ռուսը ստիպուած է հաշուի առնելու իր որոշումները տալու ժամանակ: Իսկ իր սեփական կամքէն հրաժարած եւ իր պաշտպանութիւնը ամբողջապէս ռուսի զէնքին ու բախտին կապած «բարեկամ», այսինքն՝ ողորմելի, հայութեան վրայ ի՞նչ կարիք ունի անիկա շատ գլուխ յոգնեցնելու:

Եւ մենք բնաւ իրաւունք ալ չունինք ռուսը մեղադրելու՝ անիկա իր հաշիւներն ունի: Մենք միայն կրնանք մեղադրել մեզի, որ չունինք մեր հաշիւները, կամ որ ունինք՝ միայն սխալ հաշիւներ եւ անձնատուութեան ու զինաթափութեան ապուշ ու յանցաւոր քարոզներ:

Ով իր սրտին խորքը վերջնականապէս չէ հրաժարած եւ իր հայրենիքէն, եւ իր ազգային գոյութենէն ու ինքնութենէն, եւ հայութենէն՝ պէտք է պարզ ու յստակ կերպով ըմբռնէ, թէ օգուտ չկայ մեզի ուրիշներէն, հանգիստ ալ չկայ մեզի ուրիշներէն: Եթէ ազգովին ապրիլ, տեսել ու զարգանալ կ'ուզենք՝ միակ ելքը անկախութիւնն է. ուրիշ ճամբայ չկայ:

Արդեօք ուժերնիս պիտի բաւէ՞, հասնի՞նք պիտի մեր ձգտումին՝ ատիկա ցոյց պիտի տայ կեանքը եւ պատմութիւնը, բայց *ատիկա* է մեր բռնելիք միակ ու անխուսափելի ճամբան, եւ *ստոր համար ալ մեր բոլոր*

շարժումներուն, մտածումներուն, ծրագիրներուն, ձեռնարկներուն, պրոպագանտին ու քաղաքականութեան հիմքն ու առանցքը է եւ պէտք է ըլլայ ձգտիլը անկախութեան:

* * *

Բոլոր ուժով եւ բոլոր միջոցներով ձգտիլ անկախութեան չի նշանակեր, ի հարկէ ռուսքն ու հրացանը առնել եւ երթալ իսկոյն ռուսներուն դէմը կռուի, ինչպէս հասկնալ կը կեղծեն մեր հակառակորդները: Մեր օրը-օրին ընելիքը, մեր ամէն օրուան բռնելիք դիրքը, այսինքն՝ մեր օրուան քաղաքականութիւնը միայն մեր կամքէն կախուած չէ, այլ մեր շրջապատի ու վայրկեանի իրական պայմաններէն, ուժերու դասաւորութենէն, ռուսներու եւ մեր փոքր դրացիներու բռնած դիրքէն եւ մեր ունեցած ֆիզիքական ու հոգեկան ուժերու չափէն: Գալու են ծանր վայրկեաններ, ուր խոնարհիլ ու լռել պիտի ստիպեն մեզի մեր տէրերը, գալու են օրեր բողոքի ու պահանջի, կրաւորական դիմադրութեան կամ ներգործական շարժումներու, ե՛ւ զէնքի, ե՛ւ արեան, մինչեւ որ կտոր-կտոր փրցնենք մեր իրաւունքները եւ հասնինք մեր անկախութեան:

Անշուշտ, ցանկալի է, շատ ցանկալի, որ ինչքան հնար է կարճ տեւեն այդ մաքառումները, ինչքան հնար է ծայրայեղ ընդհարումներու չհասնինք, ինչքան հնար է զէնք ու արիւն քիչ խաղայ մեր ու ռուսներուն միջեւ: Ոչ անոր համար, որ «երախտագիտութեան» զգացումը պիտի կասեցնէ մեզի ռուսի բերած «բարիքներուն» հանդէպ: Կասկած չկայ, որ ռուսներու Կովկաս գալը շատ մը բարիք բերաւ հայուն, բայց ինչ որ երբեմն բարիք էր՝ հետզհետէ կը դառնայ չարիք այս անցաւոր ու փոփոխական աշխարհիս մէջ: Մենք պէտք է ջանանք ռուսներուն հետ հնար եղածին չափ մեղմ ճամբաներով քալելու, կարելի եղածին չափ քիչ ճակատ-ճակատի գալու, այն պարզ պատճառով, որ շատ են ուժեղ եւ մենք շատ տկար: Եւ երկրորդ՝ *ինչպէս ալ, որ պատմութիւնը դառնայ, անհկա միշտ մնալու է մեր խոշոր դրացին եւ ամենէն աւելի «ելրոպացի» դրացին, որը բազմադիմի ձեւերով ազդելու է մեր ներքին ու արտաքին պայմաններուն վրայ, մեր բախտին վրայ, մանաւանդ, որ իր էութեան ու ստեղծագործութեան որոշ գծերը մօտիկ ու սիրելի են մեզի:*

Ինչքան շիտակ, բաց ու անկեղծ ըլլան մեր յարաբերութիւնները եւ մեր պահանջը եւ մեր դիմադրութիւնը ռուսներուն հանդէպ, այնքան օգուտ է մեզի: *Ամէն տեսակի կարծաշապիկ պոլիտիկոսութիւններ, կեղծ ու ստրկամիտ համակերպութիւններ, եւ «իբրեւ թէ» հրաժարումներ մեր իրաւունքներէն ու անկախութեան ձգտումէն, միայն արհամարհանք*

կ'առաջացնեն իսկական ռուս մարդու հոգիին մէջ, եւ անելի կը դառնացնեն մեր փոխադարձ յարաբերութիւնները՝ դարձնելով մեզի անոնց աչքին նենգամիտ, դաւադիր ու խարդախ: Միեւնոյն ժամանակ կ'աղաւաղեն մեր յարաբերութիւնները մեր անմիջական դրացիներուն հետ, ներկայացնելով մեզի երկերեսանի, անվստահելի ու պոչ-խաղցնող: Մինչդեռ մենք ո՛չ մէկ պատճառ չունինք մեր նպատակն ու ձգտումը կեղծելու, չէ՞ որ մեր մարդկային ամենատարրական իրաւունքն է, որ կը պահանջենք, եւ մեզի հետ է ամէն լաւ մարդու ներքին խորին համակրանքը, նոյնիսկ ռուսի, որու շահուն առայժմ դեռ հակառակ է ատիկա:

Եւ վերջապէս ինչպէ՞ս կը ծածկես եւ ինչպէ՞ս կը կեղծես ձգտում մը, որ ուզենք-չուզենք ըլլալու է մեր բոլոր քայլերուն ու շարժումներուն ղեկավարող զսպանակը: Եւ ո՞վ կը հաւատայ ձեր հրաժարիմներուն, ձեր երկրպագութիւններուն ու քօնանքին: Անոնք, այդ օտարները, այդ տիրողները, մեր պոլիտիկաներէն շատ անելի խորը կը տեսնեն, եւ գիտեն, որ զարթնած եւ ընդունակ ժողովուրդ մը իր կամքովը հրաժարիլ չի կրնար ո՛չ իր իրաւունքներէն, ո՛չ իր անկախութենէն եւ որ «փոքրիկները» կը խոնարհին միայն անկարելիութեան առաջ եւ ակռաները խածած:

Եւ մեր իմաստուններուն մեղայական հրաժարիմները, համակերպութեան ցուցադրումները կամ սուտ քարոզները ոչ թէ օտարները կը խաբեն ու կը քնացնեն, այլ կը թմրեցնեն միայն մեր մէջի խախտուտ հոգիները, իրենց պարտաւորութենէն փախչելու համար պատրուակ փնտռողները, ինչպէս եւ կը շուարեցնեն մեր աղճատուած ու խաթարուած գաղութային հոգեբանութիւնը, օտար ազդեցութիւններու տակ մեծցող մեր երիտասարդութիւնը, այսինքն՝ կը ջլատեն միայն մեր սեփական ուժերը:

Կրնայ ըլլալ, մինչեւ անգամ հաւանական է, որ ինչպէս մեր հարեւանները, այնպէս ալ մենք դեռ բաւական ատեն չունենանք մեր անկախութիւնը, յամենայն դէպս մեր ուզած անկախութիւնը: Կրնայ ըլլալ, որ դեռ առաւել կամ նուազ երկար ժամանակ մը կովկասեան երկիրները եւ անկէ ալ անդին գտնուին ուղղակի ռուսի տիրապետութեան եւ հրամանին տակը: Կրնայ ըլլալ, որ նոյնիսկ որոշ ժամանակի մը համար ձեռնտու ըլլայ մեզի իրերու այդ դրութիւնը, իբրեւ չարիքներէն փոքրագոյնը, կրնայ ըլլալ, եւ հաւանական է: Բայց նոյնիսկ այդ մեզի ձեռնտու եղած միջոցին մեր ժողովուրդը պէտք չունի հրաժարուելու իր անկախութեան ձգտումէն ու պահանջէն, ոչ իսկ «առժամապէս»:

Եւ ի՞նչ ըսել է «առժամապէս»: Առժամեայ կերպով կարելի է շարժումներ չընել, կարելի է կանգ առնել, կարելի է ետ-ետ քաշուիլ ու նահանջել, կարելի է շրթունքները խածնել ու լռել, կարելի է «գետնին տակը» ստնել. այս բոլորը բնականոն ընթացքն է ամէն մաքառման ու

ամեն պատերազմի, մանաւանդ ամեն երկարատեւ պայքարներու ու պատերազմներու: Բայց ասիկա ըսել չէ, թէ ձեռնթափ են եղած պատերազմելէ կամ հրաժարուած են դիմադրութենէ՝ խրամատներուն մէջ ամիսներով անգործ նստած զինուորը պատերազմի վրայ է, տարիներով կեանքի նշոյլ ցոյց չի տուող յեղափոխական կազմակերպութիւնը կռուի վրայ է:

Առժամապէս մեր անկախութենէն հրաժարիլ յանձնարարող պարոնները կը մոռնան նաեւ մէկ ուրիշ կարեւոր բան՝ կը մոռնան, որ հանրային զգացումները, ազգային ձգտումները, մտաւորականութեան մը ղեկավար ըմբռնումները եւ ընդհանրապէս ժողովուրդներու հոգին մոռն չէ, որ ուզած ժամանակդ հանգցնես, ուզած ժամանակդ վառես, երբ այն նշանաւոր վայրկեանը հասած ըլլայ: Անգամ մը մարելէն ետքը նորէն վառելը շատ է հարցական, ինչպէս եւ շատ է դժուար հանգցնելը, երբ անգամ մը վառուած է: Կը մարի այսինչ կամ այնինչ մարդու հոգին, ուր խեղճ ու քիչ է եղած վառելանիւթը, բայց կը վառին ու կը բռնկին միւսները, թարմերը, նորերը եւ հարուստները վառելանիւթով:

Եւ ատոր համար է, որ կեանքը կ'երթայ դէպի աջ իր ճամբով, իսկ զինաթափութեան, համակերպութեան եւ հրաժարման քարոզները դէպի ձախ իրենց գալարուն եւ «իմաստուն» ուղիներով: Եւ մէկը միւսի հետ գործ չունի, որովհետեւ ժամանակներուն պահանջը եւ ժողովուրդներու մարդավայել ու ազգավայել ապրելու բնագոյր շատ աւելի զօրեղ է ու իմաստուն, քան բոլոր կաղիկի սիլլոկիզմներն ու միշտ մէկ կողմը ծակ «տրամաբանութիւնը»:

Հաւատքը միշտ ալ եղեր է, եւ է ժողովուրդները միացնողը, ժողովուրդները վառողն ու ժողովուրդները շարժողը, որովհետեւ հաւատք կը նշանակէ համոզում, կը նշանակէ ոգեւորութիւն, կը նշանակէ ինքնավստահութիւն: Եւ մենք ունինք այդ հաւատքը, հաւատքը՝ մեր ապագային, մեր քաղաքակրթական դերին, մեր հայրենիքի բարձրացման ու մեր անկախութեան: Ով չունի մեզմէ այդ հաւատքը՝ դատապարտուած է կորուստի, իբրեւ հայ ժողովուրդի անդամ:

Ժողովուրդները, որոնք փարած են գաղափարի մը, որոնք որոշ ու յստակ ձգտում մը ունին, որոնք երազով մը կ'ապրին, այդ գաղափարին ու այդ ձգտումին համար այնքա՛ն-այնքա՛ն կը տառապին ու անչափ զոհեր կուտան, բոցով ու մուրճով ծեծուած երկաթի մը պէս, կը ստանան բացառիկ ուժ մը, որը մեզի նման ժողովուրդներու համար ամենէն կարեւոր պայմանն է դիմացկունութեան, ինչպէս եւ յաջողութեան: Որովհետեւ մեր միայն նիւթական միջոցները շատ տկար են՝ դիմադրել կարողանալու համար մեր շրջապատի քաղաքական, զինական, տնտեսական, մտաւոր ու կուլտուրական անհամեմատ աւելի ուժեղ ճնշումներուն: Միայն ոգին,

միայն գաղափարը, միայն կամքն ու համոզումը կրնան ճակատ տալ այսքան ուժեղ հակառակ հոսանքներուն: Եւ ասոր մէջն է այն մեծ հրապոյրը, այն դերը եւ այն մեծ ուժը, որ ունին մեր անկախութեան ու մեր ինքնութեան համար ապրող ու մեռնող մարդիկը մեր ժողովուրդին հանդէպ:

Մարդիկը, որ հանել կ'ուզեն հայուն սրտէն հաւատքը, վստահութիւնը, գաղափարը, եւ ցած են դրեր իրենց ամենէն սուր զէնքը՝ անկախութեան ձգտումը, ալ ինչպէ՞ս կ'ուզեն, որ յաջողութիւն ունենան, ինչո՞վ կ'ուզեն տաքցնել ու կենդանացնել հայութիւնը՝ «կոմունիզմով», «անարխիզմով», «սերվիլիզմով»: Եւ ի՞նչ է իրենց ուզածը, ալ ի՞նչ գործ ունին հայ ժողովուրդին հետ, քանի որ այդպէս անտարբեր կերպով կը նետեն մեր անկախութեան գաղափարը՝ անպէտք ու երկրորդական իրի մը պէս: Կ'ըսեն՝ «հայ ժողովուրդի պահպանումը»:

Հայ ժողովուրդի ինչի՞ն պահպանումը՝ մեր խոշոր աչքերուն ու խոշոր քիթերո՞ւն պահպանումը: Չէ որ մեր թիւն ալ, մեր աշխատանքն ալ, մեր հարստութիւնն ալ, մեր ընդունակութիւններն ալ հազար ծակերով ու առուններով կը վազեն ու կը կորչին, կ'երթան, կը ջրեն ուրիշներուն արտերը, իսկ մեր արտը կը չորնայ: *Հայ ժողովուրդը պահելու մասին մտածողը պէտք է մտածէ հայու թուական, տնտեսական ու մտաւորական ուժերու կեդրոնացման մասին, պէտք է մտածէ հայու ազգային զգացման ու գիտակցութեան ուժեղացման մասին, իսկ ասոնք հնարաւոր են միայն այն ժամանակ, երբ կ'ապրի հայ հոգիին մէջ իր անկախութեան համոզումը, եւ երբ մեր բոլոր գործերուն ղեկավարը կը դառնայ հայ ժողովուրդի անշեղ կամքը իր անկախութեանը հասնելու:*

ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Ռուրբեն Մելքոնյան

Հայտնի է, որ Հայոց ցեղասպանության խնդիրը որոշակի տեղ ունի թուրքական քաղաքական եւ գիտական օրակարգերում, ընդ որում՝ «գիտական» շրջանակներն աշխատում են պետության կողմից իջեցված պատվերի շրջանակներում: Հայոց ցեղասպանության փաստի ժխտման հարցում, բնականաբար, առավել ակտիվ է Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը, սակայն պետական այլ գերատեսչություններում եւս այս ուղղությամբ գործում են որոշակի կառույցներ:

Թուրքիայի Ազգային մեծ ժողովն այն հարթակներից է, որտեղ պատգամավորները (որոնց շարքում կան նաեւ նախկին դիվանագետներ) ուղղակի կրկնում են պաշտոնական միօրինակ եւ կեղծիքներից բաղկացած թեզերը: Միաժամանակ, խորհրդարանը հովանավորում եւ տարածում է Հայոց ցեղասպանությունը ժխտող «գիտական» գրականություն:

2005թ. ապրիլին թուրքական խորհրդարանում քննարկվեց ու հավանության արժանացավ կառավարության առաջարկը հայ եւ թուրք պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ, որին հետեւեց վարչապետ Էրդողանի նամակը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին: Սրանով փորձ արվեց տպավորություն ստեղծել, որ պատմաբանների հանձնաժողովի գաղափարը պաշտպանվում է ոչ միայն Թուրքիայի իշխող կուսակցության, այլեւ ամբողջ քաղաքական դաշտի կողմից:

Սկսած 2007 թվականից՝ Թուրքիայի խորհրդարանում Հայոց ցեղասպանության վերաբերյալ քննարկումներում ավելացել է նոր տարր, որը որոշակիորեն փոխել է նախկին միապաղաղ մթնոլորտը: Դա հիմնականում կապված է քրդական ընդդիմադիր ժողովրդավարական հասարակություն կուսակցության (ներկայումս՝ Խաղաղություն եւ ժողովրդավարություն կուսակցություն) հետ, որի մի խումբ անդամներ, ընտրվելով պատգամավոր, սկսեցին արտահայտել իշխանական տեսակետներից երբեմն տարբերվող մտքեր: Հիմնականում Թուրքիայի արեւելյան շրջաններից ընտրված քուրդ պատգամավորները բավական լավ ծանոթ են պատմական Հայաստանի տարածքներում նաեւ իրենց նախնիների կողմից կատարված ոճրագործությանը, եւ ուշագրավ է այդ պատգա-

մավորներից մեկի, ըստ էության, ինքնախոստովանական հետեւյալ հայտարարությունը. «Մեր մանկությունն անցել է 1915-ի մասին պատմություններով»: Ընդ որում՝ այս միտքն ունի երկու նշանակություն. Չայոց ցեղասպանության մասին ականատեսները եւ մասնակիցները երբեմն պատմել են հպարտությամբ, ավելի սակավ դեպքերում՝ մեղքի գիտակցմամբ:

Թուրքիայի Ազգային մեծ ժողովում Չայոց ցեղասպանության հարցը բավական ակտիվ քննարկվեց 2009թ. հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումից հետո տեղի ունեցած խորհրդարանական լսումների ժամանակ: Ինչպես եւ սպասելի էր, արտաքին գործերի նախարար Ահմեթ Դավութօղլուն փորձում էր ներկայացնել, թե իբր արձանագրություններով նախատեսվող՝ պատմական հարթության հարցերով զբաղվող ենթահանձնաժողովը քննարկելու է Չայոց ցեղասպանության խնդիրը: Սակայն հենց այդ նույն նիստի ժամանակ ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական եւ Ազգայնական շարժում կուսակցությունները քննադատեցին կառավարությանը՝ նշելով, որ հիշատակված ենթահանձնաժողովի գործառույթն այն չէ, ինչ ներկայացնում է Դավութօղլուն, եւ Չայոց ցեղասպանության հարցն այնտեղ չի քննարկվելու:

2009թ. հոկտեմբերի 21-ի Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նիստում բավական հետաքրքիր էր ընդդիմադիր քրդական ժողովրդավարական հասարակություն կուսակցության պատգամավոր Սելահեթթին Դեմիրթաշի ելույթը, որում նա արտահայտում էր իր կուսակցության տեսակետները: Խորհրդարանի ամբիոնից նա կատարեց մի շարք ուշագրավ հայտարարություններ՝ արժանանալով իշխող ԱԶԿ-ի, ինչպես նաեւ ընդդիմադիր ԺԿԿ-ի, ԱՇԿ-ի կոշտ քննադատությանը: Այսպես, ըստ Դեմիրթաշի. «Չայ-թուրքական հարաբերություններում կա հարյուր տարվա վաղեմության մի պատմական խնդիր: 1915-16թթ. այդ ժամանակվա երիտթուրք վարչախմբի կողմից Անատոլիան թուրքացնելու, իսլամացնելու նպատակով սիստեմատիկ ձեւով կիրառվել է ոչ մուսուլմանների ոչնչացման քաղաքականություն»: Անդրադառնալով հանրապետական Թուրքիայում ձեւավորված ժխտողական քաղաքականությանը՝ քուրդ պատգամավորը շեշտել է. «Այդ ժամանակ հայ ժողովրդի հանդեպ կիրառվածները ընդհանրապես տեղ չեն գտել պատմության գրքերում, կրթության նախարարության հրատարակած դասագրքերում, ասես դրանք տեղի չեն ունեցել: Այսպիսով՝ հակահայկական թշնամանք է սերմանվել այս երկրում»: Արձանագրելով այս իրողությունները՝ Դեմիրթաշը փաստում է, որ Թուրքիայում Չայոց ցեղասպանության հարցի շուրջ ստեղծվել է քաղաքական եւ գաղափարախոսական կարծրացած ընկալում: Նա

ընդգծում է. *«Մեր պարտականությունն է այս ամբիոնից հայտարարել մեր իմացած իրողությունների մասին»:*

Թուրքիայի խորհրդարանում Չայոց ցեղասպանության խնդրի շուրջ ներկայում եւս կան բավական հետաքրքիր զարգացումներ, որոնք ընթանում են երկու ուղղությամբ: Առաջինը կապված է Չայոց ցեղասպանության փաստի ճանաչման դեմ կատաղի պայքար մղող գործիչների հետ: Այս տարվա խորհրդարանական ընտրություններում Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր դարձան երեք «հայագետներ», որոնք հայտնի են իրենց հակահայկական գործունեությամբ եւ ցեղասպանության փաստը հերքող «գիտական» ուսումնասիրություններով: Դրանք են Ազգայնական շարժում կուսակցությունը ներկայացնող պատմաբան, Թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ Յուսուֆ Յալաչօղլուն, նույն կուսակցությունից վերլուծաբան Սինան Օղանն ու իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցությունը ներկայացնող պատմաբան Սայիթ Սերքեչլիքը: Ի դեպ, այս վերջինի մասին նշվում է, որ միակ թուրք պատմաբանն է, ով գիտի հայերեն:

Այն բանից հետո, երբ վերը նշված անձինք դարձան պատգամավոր, սպասելի էր, որ թուրքական խորհրդարանում որոշակիորեն ակտիվանալու է Չայոց ցեղասպանության դեմ պայքարը, եւ այդ նույն պատգամավորներն իրենց կեղծ թեզերի տարածման համար օգտագործելու են եվրոպական ամբիոնները եւս: Եվ որպես առաջին քայլ պատմակեղծարար Յուսուֆ Յալաչօղլուն օրերս հանդես է եկել առաջարկությամբ՝ խորհրդարանում ստեղծել խումբ, որը պետք է հակահայկական լոբբիստական աշխատանք կատարի հատկապես 2015-ին՝ Չայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ: Ըստ Յալաչօղլուի, այդ խումբը պետք է լինի վերկուսակցական, եւ արդեն որոշված է, որ այնտեղ տեղ են գտնելու խորհրդարանի երեք «հայագետները», ինչպես նաեւ ներկայացուցիչներ ժողովրդա-հանրապետական կուսակցությունից: Վերապահում է արված միայն ընդդիմադիր քրդական կուսակցության նկատմամբ. ըստ Յալաչօղլուի՝ նրանք պատրաստ են իրենց խմբում ընդունել քուրդ պատգամավորներին, *«եթե նրանք կասեն ճշմարտություններ»:* Նախատեսվում է, որ խորհրդարանական խումբը համակարգելու է Թուրքիայի աշխատանքները Չայոց ցեղասպանության դեմ պայքարում: Յալաչօղլուն կարծում է, որ *«պետք է այժմվանից քայլեր ձեռնարկել 2015-ի համար եւ իմանալ մեր անելիքները»:*

Ավելորդ չէ նշել, որ Յալաչօղլուն այդ խմբի ձեւավորման հարցը քննարկել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Ջեմիլ Չիչեքի հետ, որն էլ պատրաստակամություն է հայտնել ամեն կերպ աջակցել

դրան: Ի դեպ, սա սպասելի էր, քանի որ Թուրքիայի խորհրդարանի նախագահն, իր հերթին, դասվում է թուրքական քաղաքական գործիչների ծայրահեղ հակահայկական թելին եւ նա է քրեական օրենսգրքի հայտնի 301-րդ հոդվածի կնքահայրերից ու ջատագովներից մեկը, որի համար էլ ստացել է «301-րդ Ջեմիլ» մականունը:

Վերը նշվածին զուգահեռ, թուրքական խորհրդարանում ընդդիմադիր քրդական կուսակցության շարքերում հանդիպում են պատգամավորներ, որոնք էլ ավելի համարձակ հայտարարություններ են անում: Օրինակ՝ բոլորովին վերջերս քրդական Խաղաղություն եւ ժողովրդավարություն կուսակցության Դիարբեքիի պատգամավոր Ալթան Թանը Սարդինում տեղի ունեցած մի գիտաժողովի ժամանակ անդրադարձել է հայկական թեմատիկային եւ հայտարարել. *«1915 թվականին տեղի է ունեցել Հայոց ցեղասպանությունը: Ես որպես քաղաքական գործիչ եմ կիրառում ցեղասպանություն բառը, թող գրանցվի»*: Ավելի ուշ Ստամբուլի հայկական «Ակօս» շաբաթաթերթին տված հարցազրույցում Թանը էլ ավելի մանրամասնեց իր հայտարարությունը՝ ասելով, որ 1915-ի հիմնական պատասխանատուն երիտթուրքերն են, սակայն բազմաթիվ քրդեր եւս մասնակցել են ցեղասպանությանը. *«Չի կարելի ասել, որ ամբողջ քուրդ ժողովուրդը զինված մասնակցել է Հայոց ցեղասպանությանը, սակայն քուրդ ղեկավարները լուրջ պատասխանատվություն ունեն ցեղասպանության հարցում»*: Ավելորդ չէ նկատել, որ Թանը նախկինում եղել է կրոնամետ Բարօրություն կուսակցության անդամ, սակայն իր խոսքում նա մեղադրել է նաեւ մուսուլման հոգեւորականությանը Հայոց ցեղասպանության հարցում ունեցած դիրքորոշման համար:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ Հայոց ցեղասպանության խնդրի շուրջ Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում շարունակվում են զարգացումներ, որոնք մի կողմից ցույց են տալիս թուրքական քաղաքական մեքենայի մշակված եւ հետեւողական պայքարը ցեղասպանության փաստի ճանաչման դեմ, իսկ մյուս կողմից՝ ապացուցում կեղծիքի վրա հիմնված այդ քաղաքականության սնանկությունը:

**ԹՈՒՐՔԻԱ – ԱՄՆ ՌԱԶՄԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
Հայկ Գաբրիելյան**

Ա.թ. սեպտեմբերի 2-ին Թուրքիայի արտգործնախարարության խոսնակ Սելչուք Ունալը հայտնեց, որ ՆԱՏՕ-ի հրթիռային հարձակման սպառնալիքի վաղ զգուշացման ռադիոտեղորոշիչ կայանը (ՌՏԿ) տեղակայվելու է Թուրքիայի տարածքում՝ հիշեցնելով, որ հակահրթիռային պաշտպանության համակարգի տեղակայման մասին որոշումն ընդունվել է նախորդ տարվա նոյեմբերին Լիսաբոնում տեղի ունեցած ՆԱՏՕ-ի զագաթաժողովի ժամանակ. «ՆԱՏՕ-ն պլանավորում է վաղ զգուշացման ՌՏԿ տեղակայել մեր երկրում: Դա կամրապնդի ՆԱՏՕ-ի պաշտպանական պոտենցիալը եւ մեր ազգային պաշտպանական համակարգը: Թուրքիան ի սկզբանե աջակցել է այդ նախաձեռնությանը»:

Արդեն սեպտեմբերի 14-ին Թուրքիան եւ ԱՄՆ-ը Անկարայում ստորագրեցին Թուրքիայի տարածքում ՆԱՏՕ-ի ՌՏԿ տեղակայման մասին հուշագիր: Թուրքիայի կողմից հուշագիրը ստորագրել է փոխարտգործնախարար Ֆերիդուն Սինիրլիօղլուն, իսկ ԱՄՆ-ի կողմից՝ դեսպան Ֆրենսիս Ռիկարդոնեն: Հուշագրում նշված է, որ ՌՏԿ-ն տեղակայվելու է երկրի արեւելյան հատվածում ընկած Մալաթիայի նահանգի Քյուրեջիքի շրջանում:

Այս հուշագրի կնքումից հետո թուրք-ամերիկյան ռազմական համագործակցությունը մեծ թափ հավաքեց, ինչը բնավ պատահական չէր՝ հաշվի առնելով, որ ըստ ամերիկյան հեղինակավոր The New York Times թերթի՝ Քյուրեջիքի ՌՏԿ-ի տեղակայումը վերջին 20 տարիներին Վաշինգտոնի եւ Անկարայի միջեւ ռազմական համագործակցության շրջանակներում արված առավել նշանակալից նախագիծն է, եւ ամենանշանակալից քայլը՝ սկսած 2003 թվականի իրաքյան պատերազմից:

Թուրք-ամերիկյան ռազմական համագործակցության տեսանկյունից, մեծ կարեւորություն ունեն անօդաչու թռչող սարքերը (ԱԹՍ): Հայտնի է, որ արդեն երկար տարիներ Թուրքիան Քրդստանի աշխատավորական կուսակցության (PKK) դեմ պայքարում հաջողությամբ գործածում է իսրայելական արտադրության Heron ԱԹՍ-ներ: Ներկայումս, թուրք-իսրայելական ճգնաժամի պայմաններում, Թուրքիան քայլեր է ձեռնարկում ամերիկյան ԱԹՍ-ներ ձեռք բերելու, ինչպես նաեւ՝ սեփական արտադրության ԱԹՍ ստեղծելու ուղղությամբ:

Քյուրեշիքի ՌՏԿ-ի վերաբերյալ թուրք-ամերիկյան հուշագրի կնքումից 3 օր առաջ՝ սեպտեմբերի 11-ին, թուրքական լրատվամիջոցները, վկայակոչելով ամերիկյան The Washington Post թերթը, հայտնեցին, որ ԱՄՆ-ը դիտարկում է Թուրքիային Predator («Գիշատիչ») ԱԹՍ-ներ հատկացնելու հարցը: Արդեն սեպտեմբերի 24-ին թուրքական Radikal թերթը, գրեց, որ Թուրքիան ու ԱՄՆ-ը պայմանավորվել են Predator ԱԹՍ-ների տեղափոխման շուրջ:

Ըստ դրա՝ Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերումից հետո Predator-ները տեղափոխվելու են Թուրքիա, տեղակայվելու են երկրի հարավարևելյան հատվածում ընկած Ինջիրլիքի ամերիկյան ավիաբազայում եւ հետախուզական նպատակներով գործածվելու են PKK-ի դեմ պայքարում: Նոյեմբերի 1-ին Իսմեթ Յըլմազն իր ամերիկացի գործընկեր Լեոն Պանետայի հետ հանդիպման ժամանակ հաստատեց, որ իր երկիրը ցանկանում է գնել ամերիկյան ԱԹՍ-ներ:

Նոյեմբերի 4-ին Թուրքիայի վարչապետ Էրդողանը Կաննի՝ G-20-ի գագաթաժողովի շրջանակներում կես ժամանոց հանդիպում ունեցավ ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հետ, որում քննարկեց երկկողմանի ու տարածաշրջանային հարցեր, այդ թվում նաեւ Predator-ների հարցը:

Նոյեմբերի 11-ին թուրքական Taraf թերթը գրեց, որ 4 ամերիկյան Predator-ներ արդեն իսկ անաղմուկ ժամանել են Ինջիրլիքի ավիաբազա: Ըստ թերթի՝ դրանցից երկուսն Ինջիրլիք են ժամանել հոկտեմբերի 16-ին, իսկ մյուս երկուսը՝ հոկտեմբերի 23-ին: Թեեւ ամերիկյան հետախուզական սարքերը թռչելու են նաեւ թուրքական կողմի պահանջով, սակայն հետախուզության տվյալներն անմիջապես չեն հանձնվելու Թուրքիային, ինչպես նաեւ թույլ չի տրվելու, որ թուրքական անձնակազմը ղեկավարի դրանք: Բացի այդ, Թուրքիային երաշխիքներ չեն տրվել, որ հետախուզության տվյալները չեն հանձնվելու երրորդ երկրի: Թուրքիան իրավունք չունի դրանք գործածել երրորդ երկրի դեմ:

Ինջիրլիքում տեղակայված Predator-ների թռիչքները նախատեսված են նոյեմբերի 22-ից հետո, ինչը նշանակում է, որ PKK-ի համար սկսվում է ծանր ժամանակաշրջան: Նոյեմբերի կեսին Պենտագոնի խոսնակ Ջոն Բիրքին հայտարարեց, որ Ինջիրլիքում տեղակայված 4 Predator-ները հետախուզական աջակցություն են ցուցաբերելու թուրքական բանակին իր հարավային սահմաններում PKK-ի դեմ պայքարում. «Թուրքիան երկար ժամանակ Predator-ների միջոցով հետախուզական տվյալներ է ստացել Յյուսիսային Իրաքում PKK-ի գործունեության վերաբերյալ: Ներկայումս որեւէ փոփոխություն տեղի չի ունեցել այդ հարցում, պարզապես փոփոխվել է Predator-ների տեղակայման բազան. եթե նախկինում նրանք բազավորված էին Իրաքում, ապա այժմ՝ Թուրքիայում»:

Predator-ները, բարձրանալով Ինջիրլիքի ավիաբազայից, Սիրիայի օդային տարածության միջով ներթափանցելու են Իրաքի տարածք: Նրանց թռիչքի ընթացքին ԱՄՆ-ը հետեւելու է իր արբանյակների միջոցով: Predator-ների կատարած աերոլուսանկարներն առաջին հերթին հանձնվելու են ԱՄՆ-ին, ապա՝ Անկարայում գտնվող ամերիկյան շտաբին եւ նոր՝ Թուրքիայի զինված ուժերի Գլխավոր շտաբին:

Predator-ների ժամանումից հետո Թուրքիայի վարչապետ Էրդողանը հայտարարեց, որ ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հետ հստակ պայմանավորվածություն է ձեռք բերել, որ իրավունք ունի այդ անօդաչու սարքերն օգտագործել քրդերի դեմ պայքարում: Իսկ արտոգործնախարար Ահմեթ Դավութօղլուն, իր հերթին, ընդգծեց, որ Predator-ների թռիչքները գտնվելու են թուրք զինվորականների վերահսկողության ներքո: Միեւնույն ժամանակ, Պենտագոնի ներկայացուցիչները հրաժարվեցին մանրամասներ ներկայացնել այդ համաձայնագրից:

Այս ամենի հետ մեկտեղ Թուրքիան փորձում է ԱՄՆ-ից գնել Reaper տիպի անօդաչու հետախուզական ինքնաթիռներ, որոնք, Predator-ների համեմատ, առավել արագ են եւ հեռահար, ինչպես նաեւ մեծ է դրանց զինամթերքային ու հրթիռային բեռնվածությունը: Պենտագոնը հայտարարել է, որ դեմ չէ դրան, սակայն մի շարք կոնգրեսականներ չեն շտապում այս հարցում՝ հաշվի առնելով թուրք-խորալեական հարաբերություններում տիրող իրավիճակը:

Հպետք է մոռանալ, որ ԱԹՍ-ները հանդիսացել են Օբամայի վարչակազմի հակաահաբեկչական օպերացիաների հիմնական զենքն Իրաքում, Աֆղանստանում, Պակիստանում, Եմենում ու Սոմալիում: Թուրքիային այդ ԱԹՍ-ների վաճառքի հարցում Պենտագոնի կողմ լինելը վկայում է, թե Վաշինգտոնն ինչպիսի կարեւոր տեղ է տալիս Անկարայի հետ իր հարաբերություններին: Դրա համար էլ պատահական չէ, որ նախքան Իրաքի տարածքից ամերիկյան զորքերի դուրսբերումը, Predator-ներն արդեն իսկ հայտնվել են Թուրքիայում:

Հոկտեմբերի սկզբին հայտնի դարձավ, որ Օբամայի վարչակազմը որոշել է Թուրքիային վաճառել AH-1W SUPER COBRA տիպի 3 ուղղաթիռ եւ այդ առաջարկով դիմելու է Կոնգրեսին: Այդ ուղղաթիռները պատկանում են ամերիկյան ծովային հետեւակին եւ ծառայելու են PKK-ի դեմ պայքարին: Այս նախաձեռնությունը նույնպես պատահական չէ, քանի որ վերջին ամիսներին Թուրքիայի ռազմաօդային ուժերը մի քանի մարտական ուղղաթիռ են կորցրել քուրդ զինյալների դեմ պայքարում եւ նոր ուղղաթիռների կարիք են զգում:

Նոյեմբերի սկզբին մի խումբ կոնգրեսականներ Կոնգրեսի դիտարկմանը ներկայացրին թիվ 83 բանաձեւը, որով Վաշինգտոնին կոչ էին անում

զենք չվաճառել Թուրքիային: Այդ բանաձեռով նախատեսվում էր արգելք դնել Թուրքիային 111 միլիոն դոլար ընդհանուր արժողությամբ ամերիկյան սպառազինության եւ մասնավորապես AH-1W SUPER COBRA տիպի 3 ուղղաթիռների վաճառքի վրա: Կոնգրեսականները նշել էին, որ իրենց մտահոգում է Թուրքիայի բացասական դիրքորոշումը ԱՄՆ-ի դաշնակիցների նկատմամբ. «Թուրքիան սպառնում է Իսրայելին, շարունակում է օկուպացրած պահել Չյուսիսային Կիպրոսը, Չայաստանին ուժեղ շրջափակման է ենթարկել: Անկարան այսպես է վերաբերվում մեր բարեկամների ու դաշնակիցների հետ, միեւնույն ժամանակ մեր ամենահայտնի թշնամիների հետ սերտ կապեր է հաստատել: Թուրքիային զենք վաճառելիս Վաշինգտոնը պետք է հաշվի առնի այս մտահոգությունները»:

Սակայն այս նախաձեռնությունը տապալվեց. նոյեմբերի 15-ին ԱՄՆ Կոնգրեսը հավանության արժանացրեց Թուրքիային 111 միլիոն դոլարի սպառազինության վաճառքը: Պենտագոնը Թուրքիային սպառազինություն վաճառելու թույլտվության խնդրանքով հոկտեմբերի 28-ին դիմել էր Կոնգրեսին, որն էլ տվեց իր համաձայնությունը: Ուղղաթիռները Թուրքիային հատկացվելու են հիմա, իսկ մնացյալ ռազմական տեխնիկան՝ առաջիկա մի քանի ամիսներին: Մինչդեռ չպետք է մոռանալ, որ 2007 թվականին ԱՄՆ-ը հրաժարվել էր Թուրքիային վաճառել Cobra եւ Super Cobra ուղղաթիռներ:

Չոկտեմբերի 31-ին՝ Վաշինգտոնում թուրք-ամերիկյան 30-րդ տարեկան խորհրդի ժամանակ, Իսմեթ Յըլմազը հայտարարեց, որ Թուրքիան ու ԱՄՆ-ը վերագտել են միմյանց եւ ապրում են բացառիկ ժամանակաշրջան՝ ընդգծելով, որ թուրքական ու ամերիկյան բանակներն աշխարհի տարբեր վայրերում կողք կողքի մասնակցում են աշխարհին սպառնացող տարածաշրջանային անկայունության դեմ մղվող ՄԱԿ-ի ու ՆԱՏՕ-ի օպերացիաներին: Ըստ Յըլմազի՝ Թուրքիան ԱՄՆ պաշտպանական ոլորտում կարող է վերածվել լոգիստիկայի կենտրոնի՝ Աֆրիկայի, Մերձավոր Արեւելքի ու մյուս շրջանների միջեւ:

Նույն օրը հայտնի դարձավ, որ ԱՄՆ-ը համաձայնել է Թուրքիային հանձնել F-16 Fighting Falcon կործանիչների ծրագրային ապահովման ծածկագրերը: Խոսքը F-16-ի թռիչքային համակարգն ու սպառազինությունն ամբողջովին վերահսկող համակարգչային ծրագրի մասին է: Դրա շնորհիվ թուրքական կողմը հնարավորություն է ստանում այդ ինքնաթիռների վրա տեղակայել հավելյալ սարքավորում եւ սեփական արտադրության սպառազինություն:

Թուրքական լրատվամիջոցներն անմիջապես գրեցին, որ այս համաձայնագիրը կնքվել է մոտ 2 ամիս առաջ, եւ որ սա աննախադեպ իրադարձություն է, քանի որ ԱՄՆ-ը նման կերպ չի վարվել աշխարհի եւ ոչ

մի երկրի պարագայում: Նրանք ընդգծում էին, որ ցայժմ Lockheed Martin ընկերությունն արտադրել է F-16 տիպի 4200 ինքնաթիռ, որոնք առկա են աշխարհի 26 երկրների ռազմաօդային ուժերի սպառազինությունում, սակայն այդ երկրները, ներառյալ՝ Իսրայելը, իրենց սպառազինության մեջ առկա F-16 ինքնաթիռների արդիականացման համար անպայմանորեն պետք է դիմեին ԱՄՆ-ին, քանի որ իրենց արտադրած ռումբերը, հրթիռները եւ այլ բաղադրատարրերը չէին ճանաչվում F-16-երի համակարգչային ցանցի կողմից: Այժմ Թուրքիան հաղթահարեց այդ պատմեշը: Սի շարք փորձագետներ կարծում են, որ սա Քյուրեջիքի ՌՏԿ-ի կապակցությամբ ԱՄՆ-ի շնորհակալությունն է:

Այժմ Թուրքիան ԱՄՆ-ին պատվիրել է 30 F-16 C տիպի ինքնաթիռ, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 60 միլիոն դոլար: Դրանք ստանալուց հետո Թուրքիայի ռազմաօդային ուժերն իրենց սպառազինության մեջ կունենան մոտ 250 F-16, ինչով Թուրքիան կդառնա ԱՄՆ-ից հետո F-16-երի ամենամեծ բանակն ունեցող երկիրը:

Սեպտեմբերի վերջերին թուրքական լրատվամիջոցները գրեցին, որ ԱՄՆ-ը Իրաքից սեփական զորքերի դուրսբերումից առաջ ցանկանում է լուծել այդ երկրում իր ստեղծած հետախուզական ցանցի գործունեության շարունակման հարցը, եւ այդ նպատակով ամերիկյան Կենտրոնական հետախուզական վարչությունն (ԿՅՎ) ուշադրությունը բեւեռել է տվյալ տարածաշրջանում իր դաշնակիցների վրա: Խոսքն առաջին հերթին Թուրքիայի եւ Քուվեյթի մասին է: ԿՅՎ-ի ներկայացուցիչներն այցելել են Ինջիրլիք՝ դիտարկելու թուրքական տարբերակի հարմարավետությունը: Դա նշանակում է, որ ԿՅՎ-ն Իրաքին հետեւելու է Թուրքիայի տարածքից, ինչին կծառայեն Ինջիրլիք բերված նույն Predator-ները:

Թեեւ ԱՄՆ-ը մինչեւ տարեվերջ զորքերը դուրս է բերելու Իրաքից (չհաշված ամերիկյան դեսպանատան պաշտպանության նպատակով թողնվող ոչ մեծաթիվ զինվորական կոնտինգենտը), դա չի նշանակում, որ դրանով իսկ նվազում է նրա հետաքրքրությունը տվյալ երկրի նկատմամբ: Այս առումով Թուրքիան առավել է կարեւորվում ԱՄՆ-ի համար, որը մտահոգված է, որ Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերումից հետո առաջացած վակուումը կարող է լցնել Իրանը: Այս առումով ուշագրավ է հոկտեմբերի կեսին Դավութօղլուի հնչեցրած այն հայտարարությունը, թե վերջին 9 ամիսների ընթացքում Օբաման 11 անգամ զանգահարել է Երդողանին:

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Իրանի եւ նրա միջուկային ծրագրի շուրջ գործընթացներն այսօր գտնվում են միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Վերսկսվել են քննարկումներն այն մասին, որ ԱՄՆ-ը եւ Իսրայելը կարող են հարվածել Իրանի միջուկային օբյեկտներին: Միեւնույն ժամանակ, պետք է նշել, որ չնայած արտաքին քաղաքական գործընթացներին, ներքաղաքական իրավիճակն Իրանում նույնպես արժանի է հատուկ ուշադրության:

Վերջին շրջանում Իրանի ներքաղաքական կյանքում տեղ գտած զարգացումները կարելի է բաժանել մի քանի հիմնական ուղղությունների: Դրանցից ամենակարեւորները պետք է համարել իրանական ընդդիմության դիրքորոշումն արտաքին վտանգի հարցի վերաբերյալ եւ հնարավոր սահմանադրական ռեֆորմը, որի արդյունքում կարող է վերացվել նախագահի պաշտոնն Իրանում:

Իրանական ընդդիմությունը եւ արտաքին մարտահրավերները

Արեւմտյան վերլուծական կենտրոնները բազմիցս են անդրադարձել Իրանի դեմ հավանական ռազմական գործողության պարագայում իսլամական հանրապետությունում ներքաղաքական գործընթացների սրման հնարավորության հարցին: Դեռ հեղափոխությունից հետո, երբ սկսվեց իրանա-իրաքյան պատերազմը, Արեւմուտքում քիչ չէին մարդիկ, ովքեր կարծում էին, թե ռազմական գործողություններն Իրաքի դեմ կարող են թուլացնել իսլամական կառավարության դիրքերը եւ բերել ներքին խժժությունների երկրում, որոնք էլ կարող էին հանգեցնել հերթական հեղափոխությանը եւ կրոնապետության տապալմանը: Սակայն պատմությունը ցույց տվեց, որ ներքին խժժություններ պատերազմն առաջ բերեց ոչ թե Իրանում, այլ Արեւմուտքի եւ արաբական աշխարհի կողմից պաշտպանվող սադամյան Իրաքում, որտեղ բանակը, Իրանի դեմ մղվող պատերազմին զուգահեռ, ստիպված եղավ ուղղակի ռազմական գործողություններ իրականացնել շիա եւ քուրդ համայնքների մի մասի դեմ: Իսկ Թեհրանում հաստատված նոր իսլամական իշխանություններն իրանա-

իրաքյան պատերազմն օգտագործեցին աշխարհիկ ընդդիմության գործունեության փաստացի արգելման եւ հակառակորդների ոչնչացման ու վտարման նպատակով:

Այսօր, 30 տարի անց, իրավիճակը կարծես թե կարող էր այլ կերպ լինել: 2009թ. նախագահական ընտրություններից հետո իրանական հասարակությունը քաղաքական իմաստով ավելի բեւեռացված տեսք ունի, քան 80-ականներին, իսկ ընդդիմության հավաքներն Իրանում անցնում են վարչակարգի բռնի տապալման կոչերով: Լիբիայի օրինակն, իր հերթին, ցույց տվեց, թե ինչպես արտաքին ռազմական միջամտությունը կարող է բերել ներքաղաքական փոփոխությունների եւ հասարակության մի մասի կողմից ակտիվորեն պաշտպանվող վարչակարգի տապալմանը:

Սակայն արեւմտյան եւ իսրայելական մամուլում Իրանի դեմ ռազմական գործողությունների կիրառման հնարավորության մասին առաջին հրապարակումներից հետո ակնհայտ դարձավ, որ իրանական քաղաքական ընդդիմությունն այլ տեսակետներ ունի սեփական պետության նկատմամբ արտաքին ուժերի կողմից ռազմական գործողություններ կիրառելու վերաբերյալ: Նշենք, որ իրանական ընդդիմադիր դաշտը ներկայացնող միակ քաղաքական գործիչը, որն այսօր հնարավորություն ունի հանդես գալու հայտարարություններով, Իրանի նախկին նախագահ Մ.Խաթամին է: Վերջինս հնարավոր ռազմական գործողությունների մասին հայտարարություններից հետո իր հարցազրույցում ասաց, որ Իրանի գործերին ցանկացած ձեւի ռազմական միջամտության, այդ թվում նաեւ միջուկային օբյեկտների վրա հարձակման դեպքում, ամբողջ հասարակությունը եւ քաղաքական ուժերը, ներառյալ՝ ընդդիմությունը, կմիավորվեն իշխանության հետ համապատասխան հետհարված տալու համար: Նա նաեւ նշեց, որ անգամ ուժի կիրառման սպառնալիքներն են վերացնում տարածայնությունները երկրի ներսում, իսկ դրա բուն կիրառումը կմիավորի հասարակությանը:

Իհարկե, կարելի է հաշվի առնել այն, որ Խաթամին քաղաքական գործիչ է, իսկ հասարակությունն այլ կերպ է մտածում, սակայն իրանական կայքերը եւ ֆորումները, որոնց աշխատանքներին մասնակցում են հիմնականում հասարակ քաղաքացիներ, ցույց են տալիս, որ ընդդիմադիր հայացքներ ունեցող իրանցիներն առնվազն չեն հիանում հնարավոր հարձակման հնարավորությամբ: Ֆորումներում գերակշռող կարծիքն այն է, որ «սա մեր միջուկային ծրագիրն է եւ մեր տարածքը, այլ ոչ թե նախագահինը. ցանկացած հարված՝ հարված է մեր դեմ»:

Հնարավոր ռազմական գործողությունների քննարկումների ֆոնին

քիչ չեն նաեւ տարատեսակ մեկնաբանություններն Իրանում տեղի ունեցող այս կամ այն իրադարձության վերաբերյալ:

Օրինակ, նոյեմբերի 12-ին Թեհրանի արվարձանում տեղակայված Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի զորամասում տեղի ունեցած պայթյունը, որի արդյունքում 20 զինծառայող զոհվեց, այդ թվում նաեւ բարձրաստիճան սպաներ, ոմանց կողմից մեկնաբանվեց ոչ այնպես, ինչպես իրանական պաշտոնական հաղորդագրության մեջ էր, համաձայն որի՝ կատարվածը դժբախտ պատահար էր: Time-ի հրատարակման մեջ, օրինակ, հղում կատարվեց անանուն իսրայելական աղբյուրին եւ նշվեց, որ դա «Մոսադի» կազմակերպածն է: Այլ հրատարակումներում նշվեց, որ սուլունի իսլամիստ գրոհայիններն են հարձակվել զորամասի վրա եւ պայթյուն կազմակերպել:

Դժվար է ասել, թե ինչ է իրականում տեղի ունեցել, սակայն կարելի է կարծել, որ եթե պայթյունը, իրոք, կազմակերպված լիներ, ապա իրանական կողմը կօգտագործեր այն երկրի ներսում իշխանության թշնամիների հետ հաշվեհարդար տեսնելու նպատակով:

Նշենք, որ վերջին շրջանում ակտիվացել են Իրանի շուրջ ընթացող տեղեկատվական գործողությունները: Դրա վերջին դրսևորումներից է իսրայելական Depka-ի վերլուծությունն այն մասին, որ նոյեմբերի 12-ին Դուբայի Gloria հյուրանոցի սենյակներից մեկում հայտնաբերված Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի նախկին հրամանատար Մ.Ռեզայիի որդին խեղդամահ է արվել Իրանի հոգեւոր առաջնորդ Խամենեիի հրամանով, որպեսզի Մ.Ռեզային վախենա եւ խզի դաշինքը Ա.Յաշեմի-Ռաֆսանջանիի հետ: Կարելի է ենթադրել, որ սա մաքուր ապատեղեկատվություն է, քանի որ այսօր Խամենեին բացարձակ վերահսկողություն ունի Ռեզայիի վրա եւ օգտագործում է վերջինիս Մ.Ահմադինեժադի դիրքերի թուլացման նպատակով:

Չնարավոր սահմանադրական ռեֆորմն Իրանում

Վերջին շրջանի կարեւորագույն ներքաղաքական իրադարձությունն Իրանում կարելի է համարել հոկտեմբերին Ա.Խամենեիի հայտարարությունն այն մասին, որ պետք է լրջորեն մտածել Իրանում սահմանադրական բարեփոխումների անցկացման վերաբերյալ, համաձայն որոնց՝ երկիրը պետք է անցնի սահմանադրական կառավարման համակարգի: Չայտարարությունը, որը հետագայում կրկնվեց մի խումբ գիտնականների հետ հանդիպման ժամանակ, միանգամից «վերցրին» մի շարք իրանական պահպանողական քաղաքական եւ կրոնական գործիչներ, որոնք հանդես

եկան նախագահի պաշտոնի վերացման անհրաժեշտության առաջարկներով: Ա.Խամենեյի առաջարկն իրական հարթությունում նշանակում է հետեւյալը. Իրանում վերացվում է նախագահի պաշտոնը, հետեւաբար նաեւ՝ նախագահական ընտրությունները, զուգահեռաբար վերականգնվում է վարչապետի պաշտոնը, որը եւ պետք է ղեկավարի կառավարության աշխատանքները: Վարչապետը պետք է ընտրվի Իրանի խորհրդարանի եւ հաստատվի Պահապանների խորհրդի կողմից:

Միեւնույն ժամանակ, բազմաթիվ քաղաքական եւ պետական գործիչներ հանդես եկան Խամենեյի այս առաջարկության անթաքույց քննադատությամբ: Մասնավորապես, Իրանի նախկին նախագահ Յաշեմի-Ռաֆսանջանին, որը վերականգնել է 2009-ի նախագահական ընտրություններից հետո վատթարացած հարաբերությունները երկրի հոգեւոր առաջնորդի հետ, «Աֆթար-Նյուսին» տված հարցազրույցում ասաց, որ նման որոշումը «հակասում է Սահմանադրությանը եւ թուլացնելու է մարդկանց ընտրության իրավունքը»:

Ակնհայտ է, որ Յաշեմի-Ռաֆսանջանի հայտարարության մեջ մեծ ճշմարտություն կա. նախագահի պաշտոնն ամրագրված է Իրանի Սահմանադրության մեջ, իսկ նախագահական ընտրությունները կարելու տեղ են զբաղեցնում իրանական քաղաքական գործընթացներում:

Իհարկե, նախագահն Իրանում օժտված չէ լիարժեք իշխանությամբ: Յաշեմի-Ռաֆսանջանի եւ Խաթամիի նախագահության շրջանները ցույց տվեցին, որ նրանք, հենց սահմանափակ իշխանության պատճառով, չկարողացան լուրջ բարեփոխումներ իրականացնել երկրում: Սակայն նրանք որոշակի ազատականացում, այդուհանդերձ, մտցրին Իրանի հասարակական եւ տնտեսական կյանքում: Իսկ Մ.Ահմադինեժադը կարողացավ անել հակառակը՝ սահմանափակեց ազատությունները եւ ավելի կարծրացրեց պետական համակարգի աշխատանքը: Ավելին, նա անմիջական առճակատման գնաց հոգեւոր առաջնորդի հետ եւ մինչեւ օրս կարողանում է պահպանել իր դիրքերը եւ պայքարել իշխանական լծակների վերահսկման համար: Այդ պատճառով իրանական հասարակության մեջ եւ քաղաքական կյանքում նախագահի պաշտոնը համարվում է կարելորագույն ընտրովի պաշտոնը, մարդիկ նախագահին ընկալում են որպես անձ, որը կարող է ոչ հսկայական, բայց որեւէ փոփոխություն բերել իրենց կյանքում:

Կարելու է այլ հարց եւս. նախագահական ընտրությունները քաղաքականապես լիցքաթափում են իրանական հասարակությանը, ի ցույց են հանում նրա դիրքորոշումները: Անգամ 2009-ի ընտրությունները, որոնք, ցավոք, բազմաթիվ մարդկանց մահվան պատճառ դարձան, դրական դեր

խաղացին Իրանի ներքաղաքական կայունության պահպանման տեսակետից: Դրանք կազմակերպված եւ ժամանակային առումով սահմանափակված «առիթ» են մարդկանց համար՝ ներկայացնելու իրենց դիրքորոշումը՝ ի տարբերություն խորհրդարանական ընտրությունների, որոնցում ընտրողների մասնակցությունը միշտ ցածր է եղել: Այդ պատճառով նախագահի պաշտոնի վերացումը կարող է լուրջ վտանգներ պարունակել երկրի հետագա կայունության պահպանման տեսանկյունից, իսկ մարդկանց դժգոհությունները տանել ընդհատակ եւ էլ ավելի հեղափոխականացնել դրանք:

Սակայն ի՞նչն է ստիպում Ա.Խամենեյին գնալ այս քայլին: Չէ՞ որ նա չի կարող չզիտակցել նման որոշման հնարավոր վտանգները: Մի քանի բացատրություն կարող է լինել, որոնցից մենք հակված են պաշտպանել հետեւյալները, որոնք միմյանց, խորքային իմաստով, չեն հակասում.

1. «Արաբական գարնան» ֆոնն անմիջականորեն ազդել է իրանական հոգեւոր իշխանությունների դիրքորոշումների վրա: Նրանք սկսել են տեսնել լուրջ հեղափոխական վտանգ: Այսօր, քաղաքական գործընթացների կայուն պայմաններում, իշխանությունները կարողանում են վերահսկել իրավիճակը: Սակայն ի՞նչ կարող է լինել համապետական ընտրությունների ժամանակ, երբ հասարակությունը կարող է մոբիլիզացվել սեփական դիրքորոշումներն ընտրությամբ արտահայտելու նպատակով:

2. Մ.Ահմադինեժադի օրինակը ցույց տվեց, որ հոգեւոր իշխանությունների կողմից պաշտպանված, կրոնական հայացքներ ունեցող եւ իսլամական հանրապետության կառավարման համակարգի ծնունդ հանդիսացող գործիչը կարող է գալ իշխանության եւ դեմ գնալ իշխանություններին: Ժամանակին հոգեւոր իշխանությունները չպաշտպանեցին Թեհրանի ներկայիս քաղաքապետ Մ.Ղալիբաֆին նախագահի պաշտոնին ընտրվելու գործում, քանի որ նա բավարար լոյալ չհամարվեց, եւ պաշտպանեցին Մ.Ահմադինեժադին, որն էլ, լոյալ համարվելով, ընտրվելուց հետո նրանց դեմ գնաց: Այսօր Ղալիբաֆը 2013-ի ընտրությունների իշխանության հիմնական թեկնածուն է համարվում. իսկ ինչպե՞ս նա իրեն կպահի ընտրվելուց հետո:

ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆԻ ՇՈՒՋ ԱՃՈՒՄ Է Արտաշես Տեր-Յարությունյան

Այս տարվա նոյեմբերի 4-ին Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսը հանդես եկավ հայտարարությամբ, թե իրանական հարցի լուծման գործում հրեական պետությունն աստիճանաբար հակվում է ռազմական տարբերակի օգտին:

Վերջին մի քանի տարիներին Իրանի շուրջ միջազգային լարվածության աճի եւ նվազման ֆոնին բազմաթիվ են եղել հայտարարությունները եւ հրապարակումներն իրանական հարցը ռազմական ճանապարհով լուծելու մասին: Սակայն Պերեսի հայտարարությունը տարբերվում է այն առումով, որ առաջին անգամ է իրանական հարցի ռազմական լուծման մասին այդպես ուղղակի կերպով խոսվում նման բարձր պաշտոնական մակարդակով, եւ խոսում է մի երկրի նախագահ, որը հայտնի է իր ռազմական, հետախուզական եւ դիվանագիտական կարողություններով:

Իսրայելի նախագահի հայտարարությունն, անշուշտ, վկայում է, որ Թել Ավիվում նպատակ ունեն մեծացնել ճնշումը Թեհրանի նկատմամբ: Բայց եթե որոշում է կայացվել, որ նման կարգի հայտարարություն պետք է անի պետության գլուխը, դա կարող է նշանակել, որ իրանական հարցի շուրջ իրավիճակ է փոխվում, ընդ որում՝ ոչ միայն Իսրայելի համար: Յաշվի առնելով հրեական պետության կապերը Միացյալ Նահանգների ու եվրոպական առաջատար պետությունների հետ եւ մյուս կողմից՝ հարցի կարեւորությունը մերձավորարեւելյան ընդհանուր գործերում՝ Շիմոն Պերեսի հայտարարությունը դժվար թե նախապես համաձայնեցված չլիներ Իսրայելի դաշնակից կամ գործընկեր երկրների հետ:

Իրավիճակային դիտարկում

Իրանի շուրջ իրավիճակը սկսեց փոխվել, եւ ընդ որում՝ կտրուկ փոխվեց այս հոկտեմբերից:

Յոկտեմբերի 12-ին ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենը հայտարարեց, թե ամերիկյան անվտանգության մարմինները կանխել են Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի երկու գործակալների՝ Մանսուր Արբաբսիյարի եւ Ղոլամ Շոքուրի¹ կողմից ծրագրվող՝

Վաշինգտոնում Սաուդյան Արաբիայի դեսպան Ադել ալ-Ջուբերիայի սպանությունը:

Չնայած պաշտոնական թեհրանը հերքեց մեղադրանքները, սակայն արդեն երկու օր անց հայտարարությամբ հանդես եկավ Միացյալ Նահանգների նախագահ Բարաք Օբաման, որը, Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդուլահիի հետ ունեցած հեռախոսազրույցից հետո, հայտարարեց, թե ԱՄՆ-ն իր դաշնակիցների ու գործընկերների հետ ջանքեր է գործադրելու, որպեսզի Իրանը «գին վճարի» Վաշինգտոնում սաուդական դեսպանի սպանությունը ծրագրելու համար:

Հաջորդ շաբաթներին հետեւած մի շարք իրադարձություններ կասկած չթողեցին, որ Միացյալ Նահանգներն ու նրա դաշնակիցներն Իրանի նկատմամբ գործադրում են դիվանագիտական, տեղեկատվական ու հոգեբանական լուրջ ճնշում:

Նախ աղմկոտ հրապարակումներով հանդես եկան բրիտանական երկու հեղինակավոր պարբերականներ, որոնք հայտնի են Միացյալ Թագավորության հետախուզական եւ ռազմական շրջանակներում իրենց կապերով:

Նոյեմբերի 2-ին The Guardian-ը, հղում կատարելով Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարությունում իր աղբյուրներին, գրեց, թե բրիտանական զինված ուժերն արագացրել են Իրանի դեմ ռազմական գործողությունների նախապատրաստական աշխատանքները, եւ պատճառ են հանդիսացել իրանական միջուկային ծրագրի ընթացքի վերաբերյալ ստացված հետախուզական նոր տեղեկությունները: Ըստ այդմ` միջազգային պատժամիջոցներն էական ազդեցություն չեն ունեցել Իրանի միջուկային ծրագրի ընթացքի վրա, եւ թեհրանի հաջողությունները միջուկային զենքի ստեղծման ուղղությամբ կարող են առաջիկա ամիսներին հարկադրել ԱՄՆ-ին ռազմական գործողություններ սկսել Իրանի դեմ: Այդ պարագայում, The Guardian-ի աղբյուրների համաձայն, Վաշինգտոնը դիմելու է Լոնդոնի օգնությանը: Ուստի, ինչպես նշվեց, բրիտանացիները որոշում են կայացրել արագացնել Իրանի դեմ ռազմական գործողությունների նախապատրաստական աշխատանքները` ծրագրելով, որ Իրանի դեմ ռազմական կամպանիային մասնակցելու են ռազմածովային ուժերը, օդուժը եւ հատուկ նշանակության ջոկատները («լիբիական սցենար»):

Այս հրապարակումից մոտ մեկ շաբաթ անց լոնդոնյան մեկ այլ պարբերական` The Daily Mail-ը, հանդես եկավ ոչ պակաս ուշագրավ նյութով: Նոյեմբերի 10-ին թերթը գրեց, որ բրիտանական արտաքին գործերի նախարարության աղբյուրները փոխանցում են, որ մինչեւ

Սուրբ ծնունդ կամ առնվազն մինչեւ գալիք տարվա սկզբներ Իսրայելը՝ ԱՄՆ թիկունքային աջակցությամբ, ռազմական հարվածներ կհասցնի Իրանին՝ կանխելու վերջինիս միջուկային ծրագրի առաջընթացը:

Ուշագրավ է, որ The Daily Mail-ի հրապարակումից մեկ օր առաջ՝ Միացյալ Թագավորության արտգործնախարար Ուիլյամ Յագը բրիտանական խորհրդարանում հայտարարեց, թե Իրանի կողմից միջուկային զենքի ստեղծումը Մերձավոր Արեւելքում կհանգեցնի սպառազինությունների մրցավազքի, եւ այդ պարագայում դժվար կլինի Սաուդյան Արաբիային ու Թուրքիային հետ պահել միջուկային զենքերի ստեղծումից:

Նոյեմբերի 11-ին հարցի վերաբերյալ ուշադրություն գրավող հայտարարությամբ հանդես եկավ նաեւ ԱՄՆ պաշտպանության նախարար Լեոն Պանետան, որը մինչ այդ զբաղեցնում էր Միացյալ Նահանգների Կենտրոնական հետախուզական վարչության տնօրենի աթոռը: Ըստ Պանետայի, Իրանի նկատմամբ ռազմական հարվածը կարող է միայն հետ գցել նրա միջուկային ծրագիրը, բայց ոչ վերացնել այն, եւ որ նման հարվածը կարող է ունենալ «չնախատեսված հետեւանքներ»: ԱՄՆ պաշտպանության նախարարի հայտարարության կապակցությամբ նշենք, որ այստեղ կարելուք, իհարկե, նրա գնահատականը չէ, այլ այն, որ Պանետան իր այդ խոսքերով լրջություն հաղորդեց Իրանի դեմ արեւմտյան լրատվամիջոցներում հայտնվող հրապարակումներին:

Սակայն Յագի եւ Պանետայի խոսքերը միակ բանը չէին, որ «ուղեկցեցին» բրիտանական պարբերականների հրապարակումները:

Իսրայելական աղբյուրները գրեցին, թե հոկտեմբերի վերջին գաղտնի այցով Թել Ավիվում էր Մեծ Բրիտանիայի զինված ուժերի գլխավոր սպայակույտի պետ Դեւիդ Ռիչարդսը, որը բանակցություններ է վարել իսրայելցի իր գործընկեր Բենի Գանցի հետ: Իսկ նոյեմբերի 2-ին Լոնդոն մեկնեց Իսրայելի պաշտպանության նախարար Էհուդ Բարաքը, որն այնտեղ հանդիպումներ է ունեցել Միացյալ Թագավորության պաշտպանության ու արտաքին գործերի նախարարների, ինչպես նաեւ բրիտանական հետախուզության ղեկավարության հետ: Այդ այցերի կապակցությամբ իսրայելական «Մարիվ» թերթը նոյեմբերի 3-ին գրեց, որ Լոնդոնն ու Թել Ավիվը քննարկում են Իրանի դեմ հնարավոր ռազմական գործողության հանգամանքները:

Նշված հրապարակումներին զուգահեռ՝ հոկտեմբերի վերջին Իսրայելի օդուժը՝ ՆԱՏՕ-ական մի շարք երկրների օդուժերի հետ համատեղ, զորավարություններ անցկացրեց Իտալիայի Սարդինիա կղզու մոտ, որի ժամանակ փորձարկվեցին իսրայելցիների ռազմատեխնիկական

հնարավորությունները՝ Իսրայելում գտնվող բազաներից տպավորիչ հեռավորության վրա (մոտ 2500կմ) օդային հարվածներ հասցնելու առումով²:

Նոյեմբերի 2-ին իսրայելական օդուժի «Պալմաչիմ» բազայից փորձարկվեց «Իերիխոն-3» տիպի միջմայրցամաքային հրթիռ, որն, ըստ հրապարակումների, կարող է կրել մինչև 750կգ ընդհանուր քաշով մարտագլխիկներ (ընդ որում՝ բաժանվող) եւ դրանք տեղ հասցնել մինչև 10 հազ. կմ հեռավորության վրա: Միեւնույն ժամանակ, նոյեմբերի 2-3-ը ողջ Իսրայելի տարածքում անցկացվեցին հակահրթիռային պաշտպանության վարժանքներ:

Հաջորդը եղավ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) զեկույցը, որը ներկայացվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին: Նոյեմբերի 8-ին լույս տեսած զեկույցի համաձայն, 2008-ից այս կողմ Իրանը զգալի հաջողությունների է հասել միջուկային պայթյունների համակարգչային մոդելավորման գործում՝ շարունակելով աշխատանքները միջուկային զենքի ստեղծման ուղղությամբ, եւ ներկայում ընդամենը ամիսներ են պահանջվում մնան զենք ստեղծելու համար: Գործակալության մասնագետների գնահատմամբ՝ իրանական միջուկային կենտրոններում անցկացված որոշ փորձարկումներ կարող են ունենալ միայն միջուկային զենքի ստեղծման նպատակ, եւ վերջապես՝ իրանցի ինժեներները միջուկային մարտագլխիկների մշակումներ են իրականացրել իրանական «Շահաբ-3» հրթիռների համար:

Թեհրանը հայտարարեց, թե ԱԷՄԳ զեկույցը քաղաքականացված է: Այլ հայտարարություն եկավ ԱՄՆ-ից. նոյեմբերի 12-ին պետքարտուղար Յիլարի Բլինթոնը նշեց, թե ԱԷՄԳ զեկույցում բարձրացված հարցերի կապակցությամբ միջազգային հանրությունն առաջիկայում սպասում է Իրանի պատասխանին: Բլինթոնի խոսքերը պարզորոշ վկայում են, որ Վաշինգտոնը մտադիր է օգտագործել զեկույցը՝ Թեհրանի նկատմամբ նոր ճնշումներ բանեցնելու համար:

Եվ վերջապես, Իրանի շուրջ ծավալվող լարվածության մեջ իրենց ուրույն տեղը գրավեցին եւս երկու իրադարձություն:

Նոյեմբերի 12-ին իրանական հրթիռային զորքերի բազաներից մեկում՝ ընկած Թեհրանից մոտ 45կմ հարավ-արեւմուտք, տեղի ունեցավ հզոր պայթյուն, որի հետեւանքով զոհվեցին, տարբեր տվյալներով, 17-35 հոգի: Ջոհերի մեջ էր նաեւ զեներալ-մայոր Հասան Մոդադանը, որը 1984-ից ղեկավարում էր իրանական զինված ուժերի հրթիռային ծրագիրը: Թեեւ իրանական աղբյուրները գրում են, որ պայթյունը տեղի է ունեցել «Շահաբ-3» հրթիռի փորձարկման հետեւանքով³, սակայն

ամերիկյան ու իսրայելական լրատվամիջոցների փոխանցմամբ՝ պայթյունը «Մոսադի» կազմակերպած դիվերսիայի արդյունք էր:

Նոյեմբերի 14-ին իրանական հատուկ ծառայությունները հայտարարեցին, թե իրենց հաջողվել է հայտնաբերել եւ չեզոքացնել համակարգչային նոր վիրուս՝ Duqu, որը, հիմնված լինելով հայտնի Stuxnet վիրուսի վրա, նպատակ է ունեցել տվյալներ հավաքել իրանական տարբեր կառույցների համակարգչային ծրագրերի վերաբերյալ, որոնք հետագայում կարող էին օգտագործվել այդ կառույցների դեմ կիբեռ-հարձակում իրականացնելու համար⁴:

Չետեւություններ

Միջազգային ու առաջին հերթին՝ արեւմտյան հեղինակավոր հետազոտական կենտրոնների մեծամասնությունը քիչ հավանական է համարում, որ առաջիկայում եւ 2012թ. ԱՄՆ-ը եւ նրա դաշնակիցները ռազմական կամպանիա կսկսեն իսլամական հանրապետության դեմ: Չիմնավորումները սրանք են.

- Գալիք տարի նոյեմբերին Միացյալ Նահանգներում նախագահական ընտրություններ են, իսկ ամերիկյան ու եվրոպական տնտեսություններն այն վիճակում չեն, որ հսկայական գումարներ հատկացվեն Իրանի դեմ լայնածավալ ռազմարշավի ձեռնարկման համար:

- Մյուս կողմից՝ «լիբիական սցենարով» քիչ հավանական է համարվում, որ կհաջողվի ոչնչացնել իրանական միջուկային ծրագիրը, քանի որ այն բավական ծավալուն է, իսկ իրանական զինված ուժերն էլ անհամեմատ ավելի մարտունակ են:

- Նման սցենարի կիրառումը Թեհրանի նկատմամբ կարդարացնի վերջինիս կողմից միջուկային զենքի ստեղծումը եւ պատասխան գործողությունների (որոնց բնույթն ամբողջովին հնարավոր չէ կանխատեսել) իրականացումը:

- Պատասխան գործողությունների պարագայում, ԱՄՆ-ը եւ նրա դաշնակիցները կարող են կրել այնպիսի կորուստներ, որոնք քաղաքական տեսանկյունից անընդունելի կլինեն Վաշինգտոնի գործող վարչակազմի համար՝ ընտրություններին ընդառաջ:

- Իրանի պատասխան գործողությունները հանգեցնելու են նավթի միջազգային գների թռիչքին, ինչը ծանր օրեր ապրող ամերիկյան ու եվրոպական տնտեսությունների համար կարող է ունենալ ծանրագույն հետեւանքներ, եւ սա դարձյալ՝ ընտրություններին ընդառաջ:

Սակայն այդքանով հանդերձ, Իրանի նկատմամբ ընթանում է դիվանագիտական ու տեղեկատվական լուրջ ճնշում, եւ այն պետք է ունենա պատճառներ ու նպատակներ:

Դա, իրոք, կարող է պայմանավորված լինել իրանական միջուկային ծրագրում տեղի ունեցած առաջընթացով: Բայց ավելի հավանական է, որ ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների գործողությունների հիմքում ընկած է Սիրիայի շուրջ ստեղծված իրավիճակը: Գաղտնիք չէ, որ Թեհրանը Դամասկոսի անվտանգության երաշխավորն է, իսկ սիրիական հարցն այսօր հայտնվել է Արեւմուտքի քաղաքական օրակարգի առաջնային տեղում:

¹ Հաղորդվում է, որ Արբաբսիյարը ձերբակալվել է դեռ սեպտեմբերի 29-ին, իսկ Շոքուրը գտնվում է փախուստի մեջ:

² Իսրայելական օդուժը պարբերաբար անցկացնում է նման զորավար-ժություններ՝ մոդելավորելով Իրանի նկատմամբ օդային հարվածներ հասցնելը: Այստեղ առանցքային հանգամանքն այն է, որ իսրայելական ռազմական ինքնաթիռները պետք է կարողանան օդում՝ վառելիք լիցքավորող ինքնաթիռների օգնությամբ վերալիցքավորվելով, հասնել իրանական համապատասխան օբյեկտներին, հարվածներ հասցնել ու վերադառնալ Իսրայել: Այստեղ նաեւ նշենք, որ նշված հեռավորությունը՝ մոտ 2500կմ, ճիշտ այնքան է, որքան Իսրայելից հեռավորությունն է մինչեւ իրանա-աֆղանական կամ իրանա-պակիստանյան սահման: Այսինքն՝ այդ հեռավորությամբ իսրայելական օդուժը կարողանում է ծածկել Իրանի ողջ տարածքը:

³ Ներկայացվածը կասկած է հարուցում, քանի որ «Շահաբ-3»-ը (հեռահարությունը՝ մոտ 2000կմ) իրանական զինված ուժերում մարտական հերթապահության է անցել դեռ 2003-ից: Հաշվի առնելով, որ փորձարկման վայրում է եղել նաեւ իրանական հրթիռային ծրագրի «հայրը» համարվող գեներալ-մայոր Հասան Մոդադամը, չպետք է բացառել, որ իրականում փորձարկվել է նոր հրթիռ:

⁴ Հիշեցնենք. 2010թ. երկրորդ կեսին իրանական միջուկային օբյեկտները ենթարկվեցին Stuxnet անվամբ համակարգչային վիրուսի հարձակմանը, որի հետեւանքով, ըստ տարբեր տվյալների, շարքից դուրս եկան մինչեւ 3000 իրանական ցեմտրիֆուգներ:

ԱՄԵՐԻԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆՆԵՐՆ ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ԲԵՆԻԱՄԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ

2011թ. նոյեմբերի 8-ին Ատոմային Էներգիայի միջազգային գործակալության Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ հրապարակած նոր զեկույցը, որտեղ նշվում է Իրանի կողմից միջուկային զենքի ձեռքբերման ուղղությամբ համակարգված աշխատանք իրականացնելու մասին, մեծ հետաքրքրություն է առաջացրել ամերիկյան վերլուծական-փորձագիտական հանրության շրջանում: Ձեկույցի եւ Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի կողմից իրականացվող քաղաքականության հնարավոր փոփոխությունների վերաբերյալ հրապարակվել են տարբեր վերլուծություններ, որտեղ առաջարկվում են ստեղծված իրավիճակում Օբամայի վարչակազմի կողմից ձեռնարկվելիք միջոցառումների տարբերակներ:

Միեւնույն ժամանակ, հարկ է նշել, որ ամերիկյան վերլուծաբանների կարծիքները բաժանվում են երկու հիմնական խմբի: Դրանցից մեկի ներկայացուցիչները գտնում են, որ չնայած զեկույցում բերվող փաստերը մտահոգիչ են, սակայն դրանք հնարավորություն չեն տալիս միանշանակ կերպով պնդել Իրանի կողմից կարճաժամկետ հեռանկարում միջուկային զենքի ստեղծման մեծ հավանականության մասին: Վերլուծաբանների մյուս խումբը գտնում է, որ Իրանի կողմից միջուկային զենքի ձեռքբերումը միայն ամիսների խնդիր է, հետեւաբար ԱՄՆ-ի իշխանությունները պետք է հստակ քայլեր իրականացնեն Իրանի միջուկային ծրագրի հետագա զարգացումը կանխելու ուղղությամբ:

Վերլուծաբանների առաջին խմբի ներկայացուցիչներից է Մարկա Յիբսը, որը Միջազգային խաղաղության Քարնեգիի հիմնադրամի միջուկային քաղաքականության ծրագրի ավագ վերլուծաբան է: Ներկայացնելով ԱԷՄԳ-ի զեկույցում բերված հիմնական փաստերը՝ Յիբսը նշում է, որ գործակալությունը մինչեւ 2003թ. բավականաչափ տեղեկացված է եղել Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ, սակայն վերջին ութ տարիների ընթացքում տեղեկացվածության մակարդակը զգալիորեն նվազել է, քանի որ Իրանն այլևս չի համագործակցում ԱԷՄԳ-ի հետ:

Միեւնույն ժամանակ, Յիբսը նշում է, որ զեկույցը միանշանակ պատասխան չի տալիս այն հարցին, թե արդյոք Իրանն ունի միջուկային զենք ստեղծելու ծրագիր: Հստակություն չկա նաեւ այն հարցում, թե

արդյոք Իրանն անցյալում ունեցել է նմանատիպ ծրագիր: Ակնհայտ է, որ Իրանի միջուկային ծրագրի որոշ տարրեր կարող են օգտագործվել նաև միջուկային զենք ստեղծելու նպատակով, եւ Իրանը վերջին տարիներին քայլեր է ձեռնարկել այդ տարրերի զարգացման ուղղությամբ: Միեւնույն ժամանակ, ամենայն հավանականությամբ միջուկային զենքի ստեղծման համար էական նշանակություն ունեցող որոշ գործընթացներ կասեցվել են, քանի որ Իրանի իշխանությունները երկյուղել են հնարավոր հետեւանքներից: Ընդ որում՝ այս գործընթացում էական նշանակություն է ունեցել ԱՄՆ-ի կողմից Իրաք իրականացված ներխուժումը եւ առաջին ամիսներին ամերիկացիների արձանագրած հաջողությունները: Իրանի իշխանությունները ենթադրել են, որ Սադամ Յուսեյնի վարչակարգի տապալումից հետո Բուշ կրտսերի վարչակազմը կարող է ձեռնարկել Իրանում վարչակարգի փոփոխությանն ուղղված քայլեր եւ այդ պայմաններում Իրանի կողմից միջուկային զենքի ստեղծմանն ուղղված քայլերը կարող էին որպես պատրվակ օգտագործվել ամերիկացիների կողմից՝ Իրանի դեմ ռազմական գործողություններ սկսելու համար:

Չիբսը նաև նշում է, որ չնայած զեկույցում առկա տեղեկատվությանը, դժվար է միանշանակ պատասխան տալ այն հարցին, թե արդյոք Իրանում միջուկային ծրագրի շուրջ ընթացող զարգացումները ղեկավարվում են մեկ կենտրոնից, թե դրանք ներկայացնում են տարբեր հաստատությունների կողմից իրականացվող առանձին գործողություններ: Իրանի իշխանությունները 2007-2008թթ. ներկայացված բացատրություններում նշել են, որ միջուկային ծրագիրը չունի կենտրոնացված կառավարում, եւ տարբեր գիտական կենտրոններ իրականացնում են մի շարք հետազոտություններ, որոնք բոլորն էլ ունեն բացառապես քաղաքացիական նշանակություն:

Ամփոփելով վերլուծությունը՝ Չիբսը եզրակացնում է, որ զեկույցի հիման վրա հնարավոր չէ միանշանակ կերպով պնդել, որ Իրանը ցանկանում է ձեռք բերել միջուկային զենք եւ նշել միջուկային զենքի ձեռքբերման կոնկրետ ժամկետներ: ԱԵՄԳ-ի զեկույցը միայն պնդում է, որ Իրանում իրականացվում են հետազոտություններ, որոնք ուղղված են այնպիսի ունակությունների զարգացմանը, որոնք կարող են օգտակար լինել միջուկային զենքի ստեղծման համար:

Ամերիկյան վերլուծաբանների մյուս խումբն Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ հանդես է գալիս շատ ավելի կոշտ դիրքորոշմամբ: 2005-2009թթ. ԱՄՆ-ի պաշտպանության փոխնախարարի պաշտոնը զբաղեցրած Էրիկ Էդելմանը, ինչպես նաև Ռազմավարական եւ բյուջետային գնահատումների կենտրոնի նախագահ Էնդրյու Կրեպինեւիչը եւ նույն

կենտրոնի վերլուծաբան Էվան Մոնտգոմերին գտնում են, որ ԱԷՄԳ-ի հրապարակած զեկույցը լուրջ կասկածներ է առաջացնում սեփական միջուկային ծրագրի՝ բացառապես քաղաքացիական ուղղվածություն ունենալու վերաբերյալ Իրանի իշխանությունների հավաստիացումների վրա: Նրանք նշում են, որ պաշտոնական Թեհրանն աշխատում է ավելացնել թույլ հարստացված ուրանի պաշարները, որոնք հետագա հարստացումից հետո հեշտությամբ կարող են օգտագործվել միջուկային զենքի ստեղծման նպատակով:

Ներկայացնելով Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի կողմից իրականացվող քաղաքականությունը՝ վերլուծաբանները նշում են, որ այն հենվում է «մտրակի եւ քաղցրաբլիթի» սկզբունքի վրա: ԱՄՆ-ը խստացնում է տնտեսական պատժամիջոցները եւ քայլեր ձեռնարկում միջազգային ասպարեզում Իրանի հետագա մեկուսացման ուղղությամբ եւ, միեւնույն ժամանակ, Իրանին առաջարկում է շահավետ համագործակցություն միջուկային հավակնություններից հրաժարվելու դեպքում: ԱՄՆ-ի իշխանությունները ենթադրում էին, որ այս քաղաքականության միջոցով հնարավոր է ժամանակ շահել մինչ Իրանում ներքաղաքական արմատական փոփոխությունների իրականացումը, որոնց շնորհիվ իշխանության կարող էին գալ ավելի չափավոր ուժեր: Սակայն «մտրակի եւ քաղցրաբլիթի» քաղաքականությունը կոնկրետ արդյունքների չի հանգեցրել: Իրանը բավականաչափ մոտեցել է միջուկային զենքի ստեղծմանը, իսկ վարչակարգի դիրքերը, չնայած բողոքի զանգվածային գործողություններին, շարունակում են բավականաչափ ամուր մնալ:

Ամերիկյան վերլուծաբանները քննարկում են նաեւ Իրանի կողմից միջուկային զենքի ձեռքբերման պարագայում տարածաշրջանային հնարավոր զարգացումների սցենարները: Իրանի կողմից միջուկային զենքի ձեռքբերման դեպքում բավականաչափ մեծանում է Իսրայել – Իրան միջուկային պատերազմի հավանականությունը՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ առնվազն սկզբնական շրջանում Իրանը կունենա ընդամենը մի քանի մարտազլխիկ, իսկ Իսրայելի միջուկային զինանոցը կազմում է 100-200 մարտազլխիկ: Այս հանգամանքը երկու կողմերին էլ կարող է ստիպել մտածել առաջին հարվածը հասցնելու մասին՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իսրայելն ու Իրանը չունեն հրթիռների արձակման վաղ նախագուշացման համակարգեր:

Բացի տարածաշրջանում միջուկային հնարավոր պատերազմից՝ Իրանի կողմից միջուկային զենքի ձեռքբերումը կարող է հանգեցնել Մերձավոր Արեւելքում դրա հետագա տարածմանը: Ակնհայտ է, որ ԱՄՆ-ը,

միանշանակ, տարբեր վերաբերմունք ունի միջազգային հարաբերություններում «անկանխատեսելի» համարվող եւ միջուկային զենք ունեցող պետությունների, օրինակ՝ Յուսիսային Կորեայի եւ նմանատիպ համարում ունեցող, սակայն նման զենքեր չունեցող պետությունների, օրինակ՝ Իրաքի եւ Լիբիայի նկատմամբ: Իրանի կողմից միջուկային զենքի ձեռքբերման պարագայում այդ պետության նկատմամբ զսպման գործիքարանի կիրառումն ավելի կուժեղացնի այն համոզմունքը, որ միջուկային զենքը լավագույն պաշտպանությունն է օտարերկրյա հնարավոր միջամտություններից:

Միեւնույն ժամանակ, տարածաշրջանում Իրանի հիմնական մրցակիցները՝ Թուրքիան, Եգիպտոսը եւ Սաուդյան Արաբիան, կարող են քայլեր ձեռնարկել միջուկային զենք ձեռք բերելու ուղղությամբ՝ փորձելով հակակշռել Իրանի ազդեցությունը: Միջուկային զենքի ձեռքբերումը երկարաժամկետ գործընթաց է, սակայն նշված պետություններն ի վիճակի են այն իրականացնել կարճ ժամանակահատվածում: Մասնավորապես, Սաուդյան Արաբիան այս նպատակի համար կարող է օգտագործել Պակիստանի հետ ունեցած սերտ հարաբերությունները:

Ամփոփելով իրենց վերլուծությունը՝ փորձագետները եզրակացնում են, որ Իրանի կողմից միջուկային զենքի ձեռքբերմանն ուղղված գործընթացը կանխելու համար առկա հնարավորություններն աստիճանաբար սպառվում են: Միաժամանակ նվազում է նաեւ Իրանի իշխանությունների՝ գործընթացը դադարեցնելու վերաբերյալ որոշում ընդունելու հավանականությունը: ԱՄՆ-ը հարկադրված է ընտրություն կատարել Իրանի կողմից միջուկային զենքի ձեռքբերումը կանխելու նպատակով կարճաժամկետ հեռանկարում զինված ուժ կիրառելու կամ միջուկային զենքով զինված Իրանի եւ դրանից բխող բոլոր բացասական հետեւանքների հետ հաշտվելու տարբերակների միջեւ:

ԻՍԼԱՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ ՅԵՏՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՐԱՔԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Արաքս Փաշայան

Այսպես կոչված «արաբական գարունը», որ թունդիսում, Եգիպտոսում եւ Լիբիայում ուղեկցվեց իշխանափոխությամբ, իսկ այլ երկրներում (Եմենում, Սիրիայում, Բահրեյնում եւ այլն)՝ հակակառավարական հուժկու ելույթներով, օրակարգային դարձրեց արաբական պետությունների զարգացման հեռանկարի հարցը: Սույն գործընթացները, մասնավորապես, վերարթնացրին իսլամը քաղաքականացնելու ձգտումները, որոնք, տասնամյակների ընթացքում ենթարկվելով որոշակի փորձությունների ու նաեւ՝ վերափոխումների, սկսում են նոր թափ ստանալ: Եվ պատահական չէ, որ 2011-ից ի վեր արաբական աշխարհում սկիզբ առած հակակառավարական հուզումներն ունեն ոչ միայն սոցիալ-քաղաքական պատճառներ, այլեւ ինչ-որ իմաստով նաեւ՝ քաղաքակրթական հենք:

Միաժամանակ, արաբական երկրներում հասարակական-քաղաքական զարգացումների հեռանկարը դեռեւս մնում է անորոշ: Օրակարգային են այն հարցերը, թե որքանով արաբական աշխարհում հնարավոր կլինի ձեւավորել ժողովրդավարություն, տնտեսական որոշակիորեն գոհացուցիչ պայմաններ, սոցիալական արդարություն եւ այլն: Ի վերջո, զարգացման ի՞նչ մոդելներ կընտրեն արաբական երկրները, եւ ի՞նչ դեր կունենա իսլամը:

Տիրապետող տեսակետների համաձայն՝ Միջին Արեւելքում պայքար է ծավալվում հիմնականում արեւմտյան, իսլամիստական եւ թուրքական մոդելների շուրջ: Չի բացառվում նաեւ, որ տեսանելի ապագայում ի հայտ գան նաեւ քաղաքական այլ հայեցակարգեր:

Ինչպես հայտնի է, առաջին ուղղությունը կապված է ամերիկյան «Մեծ Մերձավոր Արեւելք» նախագծի հետ, սակայն ներկայումս հակաարեւմտյան ուղղվածություն ունեցող արաբական հասարակություններում այդ նախագծի իրագործումն այնքան էլ իրատեսական չէ: Ինչ վերաբերում է իսլամիստական մոդելին, ապա այն, ըստ էության, նկատի է առնում թեոկրատ պետությունների ստեղծումը, որոնց հիմքում ընկած կլինեն շարիաթական նորմեր: Այս պարագայում, իշխանության կարող են գալ, ասենք՝ «Մուսուլման եղբայրները» կամ նմանօրինակ կառույցներ,

որոնք, թեև, հրաժարվել են ծայրահեղական մոտեցումներից, սակայն չեն պատրաստվում հրաժարվել իսլամական կրոնական հայեցակարգերով ղեկավարելու սկզբունքից, որն, ի դեպ, կարող է լուրջ կոնֆլիկտ ստեղծել արդիականության պահանջների հետ:

Հատկանշական է, որ գործնականում եւ տեսականորեն շարունակում է ամրապնդվել այն թեզը, որի համաձայն՝ արաբական երկրներում կհաղթի այսպես կոչված թուրքական մոդելը (չափավոր իսլամամետ), որի մեջ ներառված են մի կողմից՝ արեւմտյան ժողովրդավարության, մյուս կողմից՝ իսլամի արժեքները: Տվյալ դեպքում, պետության հիմքում ընկած կլինեն աշխարհիկ արժեքներ, սակայն իսլամը, որպես արժեքային համակարգ, կվերաճի հասարակական լուրջ գործոնի:

Նշված թեզի ապացույցը վերջերս թուրքիստան տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններն էին, որի արդյունքում հաղթանակ տարավ իսլամամետ «Նահդա» («Վերածնունդ») կուսակցությունը՝ ստանալով խորհրդարանի տեղերի մոտ 41 տոկոսը եւ առաջ անցնելով աշխարհիկ քաղաքական ուժերից, որոնց մեջ կային երկար ժամանակ Բեն Ալիին ընդդիմադիր կուսակցություններ: Ի դեպ, թուրքիստան ազատ ընտրությունների փաստն աննախադեպ էր, նաեւ առաջին անգամ էր, որ ընտրողներն այդքան ակտիվ մասնակցեցին:

Բավական հետաքրքիր է, որ որոշակիորեն աշխարհիկ երկիր համարվող թուրքիստան ընտրությունը կանգ առավ իսլամամետ «Նահդայի» վրա: Կուսակցության առաջնորդը՝ երկար տարիներ Եվրոպայում վտարանդիության մեջ ապրած Ռաշիդ Ղաննուշին, թունիսյան հասարակությանը շատ պարզ հասկանալ տվեց, որ իշխանության գալու դեպքում իրենք չեն ձգտելու ստեղծել թեոկրատ պետություն (ասենք՝ Իրանի օրինակով), այլ նախապատվությունը տալու են ներկայիս Թուրքիայի մոդելին, ինչը ենթադրում է բազմակարծություն, բազմակուսակցականություն, տնտեսության զարգացում, իսկ շարիաթի ներդրման մասին խոսք լինել չի կարող:

Այս համատեքստում աշխարհիկ ուժերն ընտրողներին, ըստ էության, նոր բան ասել չկարողացան, քանի որ նրանց առաջարկած հայեցակարգերը նման էին նախորդ վարչակարգի օրոք գոնե տեսականորեն ամրագրվածներին: Նրանք չկարողացան առաջ քաշել սոցիալական արդարության այնպիսի երաշխիքներ, ինչպես դա արեցին իսլամամետները՝ հիմնվելով իսլամում գոյություն ունեցող սոցիալական արդարության սկզբունքների վրա:

Մինչդեռ «Նահդան», փոխառելով նույն արեւմտյան արժեքները, խոստանում է պահպանել երկրի կրոնական եւ ազգային առանձնահատ-

կուրթունքները: Մեկ անգամ չէ, որ Ղաննուշին քննադատել է իսլամի արմատական մեկնաբանությունները, ինչը, ի դեպ, գոհացուցիչ է առաջին հերթին Արեւմուտքի համար:

Թե որքանով «Նահդան» հետամուտ կլինի իր հռչակած սկզբունքներին, ցույց կտա ժամանակը: Իսլամամետներն արդեն հավաստիացրել են, որ գիտակցում են շարիաթականացման ոչ շահեկան հետեւանքները երկրի հիմնական եկամուտներն ապահովող զբոսաշրջության զարգացման համար: Սակայն նույնիսկ չափավոր մոտեցումներով հայտնի «Նահդայի» հաղթանակը թունիսի հնարավոր իսլամականացման լուրջ մտահոգություն է ստեղծել երկրում:

Ասվածի ապացույցն այն բուռն եւ բացասական արձագանքն էր, որ արձանագրվեց կուսակցության գլխավոր քարտուղար, իսկ այժմ՝ երկրի վարչապետ Համադի Ջեբալիի՝ «վեցերորդ խալիֆայության» (հինգերորդ օսմանյանն էր, որ կործանվեց 1924-ին) դարաշրջանի սկսվելու մասին արված հայտարարությունից հետո, որով նկատի էր առնվում թունիսը: Հասարակությանը փարատելու համար Ջեբալին հետագայում ասաց, թե նկատի ունեւր հոգեւոր եւ բարոյական այն արժեքները, որոնցով հպարտանում է իր երկիրը:

Ամեն պարագայում, թունիսում «Նահդայի» հաղթանակն ամենեւին պատահական չէր: Երկրի մի շարք շրջաններում կրոնական հայացքները միշտ էլ որոշակի հենք են ունեցել: Բացի այդ, ի տարբերություն «Նահդայի», թունիսում կան նաեւ արմատական իսլամիստական ուժեր, թեւեւ ոչ այնքան պոպուլյար: Ներկայումս թունիսում հիջաբ կրող աղջիկների եւ կանանց թիվը որոշակիորեն ավելացել է, իսկ նրանց շրջանում «Նահդան» զգալի հեղինակություն է վայելում: Կանանց իրավունքների ակտիվիստ, թունիսցի պրոֆեսոր Աիշա Կուրշիդի համոզմամբ՝ հենց «Նահդան» կարող է զսպել թունիսում արմատական կրոնական ուղղությունների ներկայացուցիչներին՝ ազդեցություն ձեռք բերելուց, որի հեռանկարից ոչ մի արաբական երկիր զերծ չէ:

Այստեղից հետեւում է, որ «Նահդայի»՝ որպես չափավոր ուժի, հաղթանակը նույնիսկ շահեկան է թունիսին, որը որպես հեղափոխություն իրականացրած արաբական առաջին պետություն՝ կարող է դառնալ իսլամի նկատմամբ նոր մոտեցումների ձեւավորման առաջատարը: Ամեն դեպքում, թունիսի օրինակը թույլ է տալիս ենթադրել, որ հետհեղափոխական արաբական հասարակություններում տեսանելի ապագայում կնկատվի իսլամական գործոնի ակտիվացում, որի արդյունքում իսլամիզմը կլցնի գաղափարախոսական եւ քաղաքական վակուումը:

Ամենայն հավանականությամբ, իսլամիստներն իշխանության կգան նաև Եգիպտոսում, որը պատրաստվում է խորհրդարանական ընտրություններին: Եգիպտական հասարակության մեջ ներկայումս զգալի հեղինակություն են վայելում «Մուսուլման եղբայրները», որոնք առաջիկա ընտրություններին ղեկավարելու են «Ժողովրդավարական դաշինքը»՝ դրանում ներգրավված քաղաքական տարբեր ուղղվածությամբ բազմաթիվ կազմակերպություններով: Տասնամյակներ շարունակ «Մուսուլման եղբայրները» նույնիսկ կիսաօրինական դաշտում պայքարել են Եգիպտոսը շարիաթական պետություն դարձնելու համար, իրողություն, ինչն այսօր լուրջ անհանգստություն է առաջ բերել այդ երկրի ոչ կրոնականացված շրջանակներում:

Չնայած «Մուսուլման եղբայրները» որեւէ դերակատարություն չունեցան 2011-ի հունվարին Եգիպտոսում սկսված հակակառավարական հուզումների կազմակերպմանը, սակայն գիտակցելով այդ փուլի կարեւորությունը՝ որոշ ժամանակ անց միացան պայքարին: Ներկայումս «եղբայրները», որոշակի սահմանափակումներով, մասնակցում են հասարակական-քաղաքական գործընթացներին, սակայն շատ դեպքերում նրանց գործողությունները համարժեք չեն: «Եղբայրների» գործիչներն, առանձին դեպքերում, գաղափարական առումով հակոտնյա տեսակետներ են հայտնում, ինչը դժվարություն է ստեղծում կազմակերպության ներկայիս արժեքային համակարգը ճիշտ հասկանալու համար: Չնայած նշվում է, որ նրանք կազմակերպված կառույց են, սակայն երկար տարիներ գործելով ընդհատակում՝ իրականում արդիականացման խնդիր ունեն: Սակայն առկա դժվարությունները չեն վնասում «եղբայրների» հեղինակությանը, քանի որ սալաֆիական գաղափարները Եգիպտոսում ավանդականորեն ամուր հիմքեր ունեն: Բացի այդ, նրանք ունեն մեծ թվով սոցիալական կառույցներ՝ անվճար դպրոցներ ու հիվանդանոցներ, իսկ շատ հաճախ նաև ձրի սնունդ են բաժանում ընչազուրկ եւ աղքատ ընտանիքներին, որոնք, բնականաբար, կրքեարկեն հօգուտ սալաֆիականության:

Ի դեպ, «Մուսուլման եղբայրներն» իրենք էլ գործում են զգուշավորությամբ, ինչպես նահայականները Թունիսում: Նրանք չեն ցանկանում վճռորոշ դերակատարություն ստանձնել հետհեղափոխական Եգիպտոսում՝ ըստ ամենայնի գիտակցելով անցումային շրջանի դժվարությունները: Նրանց համար գոհացուցիչ է թվում հնարավոր կոալիցիոն կառավարությանը մաս կազմելը, ինչպես դա արեց «Նահդան»:

Ներքաղաքական ճգնաժամում հայտնված Սիրիայում նույնպես կրոնաքաղաքական ուժերը կան սալաֆիականները զգալի հեղինակու-

թյուն են վայելում: Հոկտեմբերին Թուրքիայում ձեւավորված ընդդիմադիր Ազգային խորհրդի տարբեր կառույցներում ընդգրկված են սիրիական «Մուսուլման եղբայրներ» շարժման ներկայացուցիչներ, որոնք հիմնականում բնակվում են սիրիական սփյուռքում:

Նշենք, որ «Մուսուլման եղբայրների» գործունեությունը Սիրիայում արգելված է, իսկ նախագահ Բաշար ալ-Ասադը մեկ անգամ չէ, որ նշել է, թե իրենք թույլ չեն տալու իսլամիստներին՝ փոխել երկրի աշխարհիկ բնույթը: Սիրիայում «Մուսուլման եղբայրներին» լրջագույն հարված հասցվեց դեռեւս Հաֆեզ ալ-Ասադի օրոք, երբ 1982թ. Համայնի հայտնի դեպքերի ժամանակ շարժման հազարավոր ակտիվիստներ սպանվեցին, իսկ քաղաքը հավասարեցվեց հողին:

Իսլամիստներն այսօր ներկայացված են նաեւ հետհեղափոխական Լիբիայի անցումային իշխանական համակարգում: Նրանց մեջ առանձնանում է ռազմական հրամանատար Աբդ ալ-Հաքիմ Բելհաջը՝ Լիբիայի ներքաղաքական դաշտի ամենակտիվ գործիչներից մեկը, որը մեծ դերակատարություն ունեցավ Քադաֆիի իշխանության տապալման հարցում: Վերջինս իր երիտասարդությունն անց է կացրել Աֆղանստանում՝ որպես մոջահիդ ներգրավված լինելով Խորհրդային Միության դեմ տարվող քիհադական շարժումներում: Կասկածից վեր է, որ իսլամիստական ուժերն ապագայում կարող են Լիբիայի նորընտիր իշխանության մաս կազմել: Այնպես որ, բախումը կառավարման իսլամական ուղու կողմնակիցների եւ այն լիբիացիների միջեւ, ովքեր ավելի աշխարհիկ մոտեցումներ ունեն կամ ժամանակին սովորել են Արեւմուտքում, անխուսափելի է դառնալու:

Փաստորեն, «արաբական գարնան» առաջին արդյունքներից մեկը հստակ է. իսլամի քաղաքականացումը դառնում է անխուսափելի, քանի որ կա այն համոզումը, թե իսլամական սկզբունքների որոշակի (կամ, նույնիսկ, ամբողջական) նեղրմամբ հնարավոր կլինի հաղթահարել իսլամական միջավայրին բնորոշ խնդիրները: Սակայն այս միտումը կարող է լուրջ առճակատում ստեղծել ավելի աշխարհիկ մոտեցման հետ: Ի դեպ, զարգացման աշխարհիկ եւ կրոնաքաղաքական ուղղությունների միջեւ պայքարը միշտ էլ բնորոշ է եղել արաբական երկրների նորագույն շրջանի պատմությանը: Արաբական հասարակություններում իսլամիստների հիմնական հաջողությունը կապված է եղել այն փաստի հետ, որ անկախության ձեռքբերումից հետո մի շարք երկրներում իշխանության եկած աշխարհիկ էլիտաները, ներմուծելով առանձին եվրոպական արժեքներ, այդպես էլ չկարողացան արդարացնել սեփական ժողովուրդների հույսերը:

Արդյոք իշխանության եկող իսլամիստական ուժերը կկարողանա՞ն հաղթահարել առկա խնդիրները եւ գոհացնել սեփական հասարակություններին՝ ցույց կտա ժամանակը: Այն թեզը, թե իսլամական նորմերը պետության ու հասարակության հիմքում դնելը հաջողության երաշխիք է, վիճահարույց է եւ կարող է հերթական հիասթափության առաջ կանգնեցնել արաբական հասարակություններին: Յեռանկարը ճիշտ հասկանալու համար պետք է նկատի ունենալ, որ արաբական երկրներում հասարակական-քաղաքական բարեփոխումների իրականացման համար ոչ միայն երկար ժամանակ, այլեւ մեծ ռեսուրսներ եւ նպաստավոր պայմաններ են անհրաժեշտ, անկախ այն հանգամանքից՝ այդ բարեփոխումներն իսլամական, թե այլ արժեքների համատեքստում կիրականացվեն: Այսօր արաբական երկրներում կան օբյեկտիվ մի շարք դժվարություններ (ժողովրդագրական աճի բարձր տեմպերը, բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները եւ այլն), որոնք լրջագույն խնդիրներ են ցանկացած վարչակարգի համար:

«ԼԻԲԵՐԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ ՏԱՊԱԼՎԵՑ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՈՂՄԻՑ»

Ալեքսեյ Պողոցերոս

Առաջին անգամ ես Մուսամար Քաղաֆիին տեսել եմ 1975թ., երբ, լինելով ԱԳՆ աֆրիկյան բաժնի 2-րդ քարտուղար, ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Ա.Կոսիգինին ուղեկցող պատվիրակության կազմում ժամանեցի Տրիպոլի: Հետագայում, 1976-1980թթ., աշխատելով որպես Տրիպոլիում ԽՍՀՄ դեսպանատան 1-ին քարտուղար, Քաղաֆիին հանդիպել եմ տասնյակ անգամ. այցերի ընթացքում նրա մոտ եմ ուղեկցել մեր դեսպաններին, մասնակցել Լիբիա ժամանած պատվիրակությունների բանակցություններին, թարգմանել լիբիական առաջնորդի՝ 1976-1981թթ. Մոսկվա կատարած այցերի ժամանակ խորհրդային ղեկավարների հետ նրա զրույցները, իսկ հետո՝ 1992-1996թթ., նրա հետ հանդիպել եմ արդեն որպես Տրիպոլիում ՌԴ դեսպան:

Քաղաֆին տարօրինակ էր. արտասահմանյան այցերի ժամանակ վրանում գիշերելը, կանանց պահակախումբը, ՄԱԿ Գլխավոր վեհաժողովում ելույթի ժամանակ կազմակերպության կանոնադրության պատռումը եւ այլն: Սակայն դա ոչ մեծ երկրի ղեկավարի մտածված մարտավարություն էր, ով ձգտում էր ամեն գնով իր եւ Լիբիայի վրա ուշադրություն գրավել:

Անշուշտ, Քաղաֆին բռնապետ էր, բայց նա Իրաքի նախագահ Սադամ Հուսեյնի տիպի բռնապետ չէր: Նրա օրոք քաղաքական շարժառիթներով մահապատիժներ եղել են, սակայն զանգվածային բռնությունների Քաղաֆին չի դիմել: Դեռ ավելին, նա զարմանալի մեղմություն էր ցուցաբերում իր նախկին զինակիցների նկատմամբ, որոնց հետ տարածայնություններ էին առաջացել: Բավական է հիշել Աբդ ա-Սալամ Ջելուդին. երբ նրանց միջեւ կոնֆլիկտ ծագեց, Ջելուդը հեռացվեց Լիբիայի հեղափոխական ղեկավարության կազմից, բայց հանգիստ ապրում էր Տրիպոլիի իր ամառանոցում եւ անգամ ժամանակ առ ժամանակ մեկնում արտասահման:

Քաղաֆին խորապես հավատացյալ մարդ էր: Լուրջ որոշումների ընդունումից առաջ նա գնում էր անապատ եւ առանձնանում վրանում՝ խորհրդակցելով աստծո հետ: Սա մեզ անսովոր էր թվում, սակայն հիշենք որ համենատաքար ոչ վաղ անցյալում՝ 19-րդ դարի վերջին, Վիլհելմ Առաջին թագավորը կարելուր որոշումների ընդունումից առաջ հեռանում էր ծով, փակվում նավի եկեղեցում եւ դիմում աստծուն, թե ինչպես վարվել: Պետական գործիչներից Քաղաֆիին հիացնումք էր պատճառում Գամալ Աբդել-Նասերը: Մուհամեդ Հասսանեյնա Հեյբալի վկայությամբ՝ «Քաղաֆիին

կերտել են երկու մարդ՝ Մուհամեդ մարգարեն եւ Գամալ Աբդել-Նասերը: Արդյունքը եղավ մարգարեի կյանքի ժամանակաշրջանի իսլամական գաղափարների եւ Նասերի հեղափոխական սկզբունքների խառնուրդը»:

Քաղաֆիի անվիճելի արժանիքն էր Մեծ արիեստական գետի կառուցումը, որը դարձավ աշխարհի ամենախոշոր ճարտարագիտական նախագիծը: Կառուցվեց խողովակաշարերի համակարգ, որը 35 հազ. խորանարդ կիլոմետր քաղցրահամ ջուր պարունակող՝ Սահարայի ավազների տակ գտնվող չորս հսկայական լճերի ջուրը մատակարարում էր երկրի հյուսիսային շրջաններին: Գետը ոչ միայն պետք է ջրով ապահովեր առափնյա քաղաքները, այլեւ հնարավորություն տար գյուղատնտեսության համար յուրացնել 160 հազ. հեկտար հող:

Քաղաֆիի անվիճելի արժանիքն է նաեւ այն, ինչ արել է սոցիալական ոլորտում: Ազգային եկամտի զգալի մասը, որը 2010թ. բնակչության յուրաքանչյուր շնչին կազմել է 14,2 հազ. դոլար, բաշխվել է հոգուտ բոլոր լիբիացիների: Գործնականում վերացվել էր անգրագիտությունը, մանկական մահացության մակարդակն իջել էր մինչեւ 25՝ հազար նորածնից, ամեն երեխայի համար ծնողներին վճարվում էր 7 հազ. դոլար, նորապսակներին բնակարանի համար տրամադրվում էր 60 հազ. դոլար, հիմնական սննդամթերքներն ու բենզինը պետության կողմից դոտացվում էին, էլեկտրականությունը ձրի էր, չունեւորները ստանում էին դրամական օգնություն, սննդամթերք, իսկ ոմանք էլ՝ նաեւ ավտոմեքենայի սերտիֆիկատ, գործազրկության նպաստը կազմում էր ամսական 750 դոլար:

Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականությանը, ապա Յեյքալի խոսքերով, Քաղաֆին, լինելով «հասարակ, անկեղծ մարդ», իշխանության գալուց հետո հայտնվեց «դավադրություններով ու մաներներով լի բարդ աշխարհում», ինչն էլ մեծապես կանխորոշեց նրա պահվածքը միջազգային ասպարեզում, որը, ինչպես նշում է Եգիպտացի լրագրողը, նման էր Տարզանի պահվածքին Նյու Յորքում:

Նրա արտաքին քաղաքականությունը նույնպես ենթարկվում էր իր տեսական պոստուլատները կենսագործելու ձգտմանը: Հանդիսանալով, ինչպես Աբդել-Նասերը, պանարաբիզմի հետեւորդ, նա ջանում էր միավորվել մեկ Սիրիայի, Եգիպտոսի կամ Սուդանի, մեկ Թունիսի, Ալժիրի կամ Մարոկոյի հետ: Այս բոլոր նախաձեռնությունները, որոնք առաջադրվում էին առանց հաշվի առնելու իրական իրավիճակը, ձախողվում էին: Արաբական միասնության մեջ հիասթափությունը նրան դրդեց կանգնել աֆրիկյան միասնությանը հասնելու ճանապարհին՝ Աֆրոմիության (ԱՄ) ձեւավորման միջոցով, որը կզնար ինտեգրման ուղիով՝ հետեւելով Եվրամիությանը: Թեեւ ԱՄ-ը պաշտոնապես ստեղծվեց՝ փոխարինելով Աֆրիկյան միասնության կազմակերպությանը, սակայն նրանից Եվրամիության նմանատիպ չստացվեց եւ չէր կարող ստացվել:

Լիբիայի արտաքին քաղաքականության հաստատուններից էր ազգային-ազատագրական պայքարի սատարումը: Քաղաքին, սակայն, հստակ չափորոշիչներ չունեին, թե ինչ է պետք հասկանալ «ազգային-ազատագրական շարժման» տակ: Արդյունքում լիբիացիներն օգնություն էին ցուցաբերում, մի կողմից՝ Իռլանդական հանրապետական բանակի կամ Մորոյի ազատագրության ճակատի տիպի ահաբեկչական խմբավորումներին, մյուս կողմից՝ Պաղեստինի ազատագրության կազմակերպությանը, Աֆրիկյան ազգային կոնգրեսին, Մոզամբիկի ազատագրության ճակատին, Հարավարեւմտյան Աֆրիկայի ժողովրդական կազմակերպությանը:

Լիբիական վարչակարգի արտաքին քաղաքական գործողություններն անխուսափելիորեն ասոցիացվում են 1988թ. դեկտեմբերի 21-ի՝ շոտլանդական Լոքերբի բնակավայրի վրա «Պանամերիկան» ընկերության Բոինգ-747 եւ 1989թ. սեպտեմբերի 19-ի՝ Նիգերի օդում «Յուտա» ընկերության DC-10 ինքնաթիռների պայթյունների հետ, որոնց արդյունքում, ընդհանուր առմամբ, զոհվեց 440 մարդ: 1999թ. ֆրանսիական դատարանը վեց լիբիացիների ֆրանսիական մարդատար ինքնաթիռի վրա ահաբեկչական գործողության համար հեռակա կարգով դատապարտեց ցմահ բանտարկության, իսկ 2002թ. շոտլանդական դատարանը լիբիական հատուկ ծառայությունների աշխատակից Աբդ ալ-Բասիթ ալ-Միհրաբիին ամերիկյան ինքնաթիռի պայթեցման համար դատապարտեց ցմահ բանտարկության: 2003թ. օգոստոսի 12-ին լիբիական կողմն ընդունեց, որ իր պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում Բոինգ 747-ի կործանման համար, սակայն շարունակեց մերժել DC-10-ի ոչնչացման իր մասնակցությունը: Նույն Քաղաքիի դեմ մեղադրանք չառաջադրվեց: Ավելին, 1999թ. օգոստոսին Ֆրանսիայի դատախազը հանձնարարեց ֆրանսիական մարդատար ինքնաթիռի պայթեցմանը մասնակցելու մեջ նրան չմեղադրել:

Ինչ էլ որ լինի, երկու ինքնաթիռների կործանումը սեւ բծի նման մնում է Քաղաքիի կառավարման վրա: Կա, սակայն, նաեւ մեղալի մյուս կողմը: 1973թ. իսրայելական կործանիչներն առանց նախազուլաացման օկուպացված Սինայի օդում խփեցին ուղղությունից շեղված լիբիական ինքնաթիռը: Ձոհվեց շուրջ 150 մարդ: Ո՛չ Անվտանգության խորհրդի որոշում եղավ, ո՛չ պատժամիջոցների սահմանում (Արեւմուտքի համար նորմ հանդիսացող «երկակի ստանդարտների» վառ օրինակ, այդպես չէ՞):

Իր կյանքում Քաղաքիին՝ որպես քաղաքական գործիչ, քիչ սխալներ չի գործել, սակայն նա ամեն անգամ դրանք շտկել է՝ անելանելի թվացող իրավիճակներից ելք գտնելով: Բայց նրա երկու սխալները ճակատագրական եղան:

Նախելառաջ, Քաղաքիին ճիշտ չզնահատեց իրադրությունը Լիբիա-

յում, որտեղ աճել էին ընդդիմադիր տրամադրությունները: Նրա կառավարումից դժգոհ էին Քիրենաիքայի ցեղախմբերի վերնախավը, որի՝ «պետական կարկանդակի» բաժանմանը մասնակցելու հնարավորությունը սահմանափակ էր, եւ իրենց խաբված զգացող Ջեբել Նեֆուսայի բերբերները: Դրան ավելացան ժողովրդավարացման պահանջները, որոնցով հանդես եկան երիտասարդությունը, ազգային բուրժուազիան, ժամանակակից միջին խավը: «Ազատության մարտիկների» հարվածային ուժը դարձան արմատականները: Լիբիական իսլամական մարտական խումբը կարողացավ շտկվել պարտությունից, որ նա կրել էր 1996թ.՝ փորձելով խռովություն բարձրացնել Քիրենաիքայում: Քաթարի օգնությամբ ձեռք բերվեց եւ Լիբիական անապատում թաքցվեց զենք, ուսուցանվեցին ու Լիբիա փոխադրվեցին գրոհայիններ: Նրանք անմիջապես գործուն մասնակցություն ունեցան հակակառավարական ելույթներին՝ որոնք առաջին իսկ օրերից վերածվեցին զինված խռովության:

Մուամարի որդի Սեյֆ ալ-Իսլամը զգաց վերահաս վտանգը: Նա հորն առաջարկեց ընդունել սահմանադրություն, անցկացնել խորհրդարանական եւ նախագահական ընտրություններ, սակայն Քադաֆին հրաժարվեց դա անել: Եթե նա գնար այդ քայլին, ներկայիս ողբերգությունից, հավանաբար, կհաջողվեր խուսափել:

Քադաֆիի երկրորդ լուրջ սխալն այն համոզմունքն էր, թե Լիբիայի արտաքին սպառնալիքն անցել է: Նա չէր սպասում, որ այդ նույն պետությունների ու կառավարությունների ղեկավարները, որոնք նրան հավաստիացնում էին բարեկամության մեջ, ողջագուրվում նրա հետ, թույլատրում նրան վրան խփել իրենց մայրաքաղաքների կենտրոնում, կիրամայեն ռմբակոծել Լիբիան կամ չեզոք-քշմանական դիրք կգրավեն:

Կատարվածը Քադաֆիի համար սոսկալի հարված էր: Նրա զինակիցներից Մանսուր Իբրահիմի վկայությամբ՝ «նա մտածում էր, թե ժողովուրդն իրեն մինչեւ վերջ կսիրի: Նա զգում էր, որ մարդիկ, որոնց համարում էր իր բարեկամները, ինչպիսիք Թոնի Բլերն ու Սիլվիո Բեռլուսկոնին են, իրեն դավաճանել են»:

Սակայն, չի կարելի աչքաթող անել այն, որ լիբիական առաջնորդը տապալվեց ոչ սեփական ժողովրդի կողմից: Նրա կողմն էր Տրիպոլիտանիայի եւ Ֆեզանի բնակչության մեծամասնությունը, իսկ ապստամբների զինված կազմավորումները, երբ մնացել էին առանց օդից օգնության, պարտություն պարտության հետեւից էին կրում: Նրանց հաղթանակն ապահովեց Զյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպության օդուժը՝ յոթ ամսվա ընթացքում իրականացնելով 26 հազ. թռիչք: Խախտելով Անվտանգության խորհրդի թիվ 1973 բանաձեւը՝ ընդդիմության կողմից մարտնչում էին քաթարցի հարյուրավոր զինվորներ ու սպաներ, որոնց մասնակցությունը մարտական գործողություններին ընդունվել է Ազգային

անցումային խորհրդի նախագահ Մուսթաֆա Աբդ ալ-Ջալիլի եւ Քաթարի ՁՈւ գլխավոր շտաբի պետ Չամադ ալ-Աթիյայի կողմից արված հրապարակային հայտարարություններում: Նրանք ֆրանսիական արտասահմանյան լեգեոնի, անգլիական 22-րդ հատուկ ավիացիոն ծառայության գնդի, ինչպես նաեւ Արաբական Միացյալ Էմիրությունների (ԱՄԷ) մարտիկների հետ վճռական դեր խաղացին Տրիպոլի գրոհելու ժամանակ (ինչը հաստատված է տասնյակ ականատեսների վկայությամբ): Ֆրանսիան, Քաթարը եւ ԱՄԷ-ն խռովարարներին մատակարարում էին սպառազինություն, նրանց ջոկատներ էին ուղարկվում ֆրանսիացի, անգլիացի եւ քաթարցի ռազմական խորհրդականներ: Նաեւ հարվածն այն շարասյանը, որով շարժվում էր Քադաֆին, հասցրել են դաշնակիցների ուղղաթիռները (ինչը պաշտոնապես հաստատել է ՆԱՏՕ հրամանատարությունը), իսկ «ազատության մարտիկները» սոսկ դրանից հետո զազանաբար սպանեցին վիրավոր լիբիական առաջնորդին:

Ուշադրություն է գրավում նաեւ այն, որ նրա մահվանից երկու օր առաջ Տրիպոլի ժամանած ԱՄՆ պետքարտուղար Յիլարի Բլինթոնը հրապարակավ պահանջեց «սպանել կամ բռնել Քադաֆիին, որպեսզի լիբիական ժողովուրդը նրանից այլեւս չվախենա»: Օդային հարձակումների ընթացքում զոհվեցին լիբիական առաջնորդի որդիներ Սեյֆ ալ-Արաբն ու Չամիսը եւ երեք թոռները՝ չորս ամսական Մանսուրան, երկամյա Սեյֆը եւ երեքամյա Քարթահոն, իսկ նրա որդիներից եւս մեկը՝ Մուհաթասիմ Բիլլահը, հոր հետ գերի վերցվեց ու սպանվեց «ժողովրդավարության պաշտպանների» կողմից:

Քադաֆիի մահով ավարտվեց դարաշրջանը, որ սկսվել էր 1955թ. Սուեզի ջրանցքի ընդհանուր ընկերության ազգայնացմամբ. դարաշրջան, երբ արաբ ժողովուրդներին թվում էր, թե իրենք ի վիճակի են ազատվել Արեւմուտքի տիրապետությունից եւ սեփական ճակատագիրը վերցնել իրենց ձեռքը:

Ներկայումս, նշում է հնդիկ փիլիսոփա Ջ.Կապուրը, տեղի է ունենում միասնական քաղաքակրթական մոդելի պարտադրում (այդ թվում եւ ուժով), «որը հարգում եւ պաշտպանում է շուկայի շահերը», եւ այդ կապակցությամբ ձեռնարկվող «կրոնական կամ մշակութային բազմազանությունը վերացնելու փորձերը միշտ ուղեկցվում են տնտեսական, ֆիզիկական, սոցիալական բռնության գործընթացներով»:

Հասարակություններին, որոնք հրաժարվում են ընդունել այդ մոդելը, հարկադրում են զենքով: Այդ մոդելի մեջ Լիբիան չէր ներգրվում: Նրանից դուրս են Սիրիան եւ Իրանը...

«ԳՐԱՎԻՐ ՈՒՈԼ-ՍԹՐԻԹԸ»

Գազիկ Տերտերյան

Տարին մոտենում է ավարտին, եւ վերլուծաբանական հանրությունը փորձում է առանձնացնել 2011-ի գլխավոր իրադարձություններն ու դրանց համապատասխան գնահատականներ տալ: Եվ եթե, այսպես կոչված, «արաբական գարունն» առանց որեւէ լուրջ մրցակցության գլխավորում է կարելուր աշխարհաքաղաքական գործընթացների ցուցակը, ապա հասարակական եւ սոցիալ-տնտեսական ոլորտում պատկերն այնքան էլ միանշանակ չէ:

«Համակարգի» ճգնաժամ

Այսօր տնտեսական ոլորտի վերլուծաբանների մի զգալի մասը համոզված է, որ գործող «կապիտալիստական համակարգը», դատելով ներկայի միտումներից, կորցրել է նախկին արդյունավետությունը եւ սպառել կենսունակության ռեսուրսները: Ոմանք դա փորձում են բացատրել «գլոբալիզացիայի ավարտով»: աշխարհն արդեն տնտեսապես ինտեգրվել է, դարձել մեկ ընդհանուր շուկա, եւ էքստենսիվ զարգացման հնարավորությունները նվազել են: Այլք շեշտում են «սպեկուլյատիվ կապիտալի» (այսպես կոչված «օդից ստացվող» շահույթի) անթույլատրելի մեծացումը: Օրինակ, FOREX-ի (Foreign Exchange Market) շրջանակներում կատարվող արտարժույթի տարեկան առեւտուրը կազմում է ավելի քան \$800 տրիլիոն, ինչը տասնյակ անգամներ (որոշ հաշվարկներով՝ ավելի քան 80 անգամ) գերազանցում է ռեալ ապրանքների առեւտրի ծավալը: Հատկանշական է, որ համաշխարհային բանկային գործարքների 97%-ը թղթերի շրջապտույտ է եւ ընդամենը 3%-ն է արտացոլում ու սպասարկում իրադրությունն արտադրական ոլորտում: Ինչպես գրում է Գլոբալիզացիայի ինստիտուտի տնօրեն Բորիս Կագարլիցկին, «ինչո՞ւ երկար տանջվել, կառուցել գործարաններ, զարգացնել տեխնոլոգիաներ, գտնել կադրեր, եթե կարելի է «պտտացնել փողերը» եւ ստանալ արագ շահույթ»:

Որպես սպառնալիք է ընկալվում նաեւ Անդրազգային ընկերությունների տեսակարար կշռի մեծացումը գլոբալ տնտեսությունում. բավական է նշել, որ նրանց ընդհանրական ՀՆԱ-ն կազմում է համաշխարհային ավելի

քան 60%-ը: Համաձայն փորձագետների (որոնց թվում են Նոբելյան դափնեկիրներ), այդ ընկերությունները, ինչպես եւ միջազգային ֆինանսական-տնտեսական կառույցները, չունեն հստակ ամրագրված պատասխանատվություններ այս կամ այն երկրի հանրությունների նկատմամբ ու հաճախ գործում են զուտ սեփական ֆինանսական շահերից ելնելով: Գործելաձեւի նման տրամաբանությունը չի ենթադրում նրանց ծառայություններից օգտվող երկրների հանդեպ տարրական սոցիալ-բարոյական (իսկ հաճախ՝ նաեւ տնտեսական) պարտավորությունների ստանձնում եւ կատարում՝ այստեղից բխող բոլոր հետեւանքներով:

Սակայն, անկախ վերլուծություններից, քաղաքական գործիչները, վերլուծաբանները եւ, վերջապես, շարքային մարդիկ գրեթե միահամուռ փաստում են, որ գլոբալ տնտեսության վիճակը լուրջ անհանգստությունների տեղիք է տալիս: Այդ առիթով նկատենք, որ վիճակը բարվոք չէ ոչ միայն Հունաստանում, այլեւ, օրինակ, ԱՄՆ-ում, որտեղ ռեալ հաշվարկներով աշխատանք չունի բնակչության 16.5%-ը, իսկ մինչեւ 25 տարեկան երիտասարդության շրջանակներում գործազրկությունը հասնում է 25%-ի՝ այն պարագայում, երբ ամեն տարի ուսման վարձն աճում է միջինը 15%-ով: «Սպեկուլյատիվ կապիտալիզմի» դեստրուկտիվ տրամաբանությունը զգալիորեն ազդել է նաեւ ժողովրդավարական համակարգի եւության վրա. որոշ սոցիոլոգներ եւ տնտեսագետներ (Քոլին Կրաուչ, Միխայիլ Դեյլազին եւ այլք) որակում են ներկայի իրողությունները որպես «պոստդեմոկրատիա»: Նման հասարակարգում ժողովրդավարությունը փոխարինվել է իմիտացիոն եւ փիառային գործընթացներով, որոնք ծառայում են ոչ թե հանրության, այլ մասնավոր ընկերությունների շահերին:

Սոցիալական եւ տնտեսական խնդիրները հուզում են ոչ միայն վերլուծաբաններին եւ բողոքի ցույցեր կազմակերպողներին, այլեւ նրանց, ովքեր հանդիսանում են գլոբալ համակարգի հենասյուները: Օրինակ, միլիարդատերեր Բիլ Գեյթսը եւ Ուորեն Բաֆեթն առաջարկում են բաժնետոմսերի վաճառքի վրա հարկ սահմանել (ՉԼՄ-ն դա անվանում է «Ռոբին Հուդի հարկ») եւ ստացված միջոցները (\$40-50 մլրդ) ուղղել անապահովների կարիքներին:

Բերքլիի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Ռայխը վերջերս հրատարակած մենագրությունում գրում է, որ ներկայում, ինչպես 30-ականների «մեծ դեպրեսիայի տարիներին», կապիտալիզմին մեծ վտանգներ են սպառնում, եւ «հնարավոր են անգամ հեղաշրջումներ», եթե չհաջողվի կրճատել հարուստների ու աղքատների եկամուտների միջեւ եղած խզումը: Ռ.Ռայխի մռայլ կանխատեսումներն այսօր բաժանում են շատերը: Ըստ Goldman Sachs-ի առաջատար վերլուծաբան Չարլզ

Նենների՝ 2012-ին սպասվում է ֆինանսական կոլապս, իսկ Թրենդների ինստիտուտի ղեկավար Ջերալդ Սելենտեն պնդում է, որ հեռու չեն «սովյալների ապստամբությունները» եւ «երիտասարդական լայնածավալ հուզումները»:

Հայտնի է, որ «վատ սցենարներն» ընդհանուր առմամբ վերլուծաբանական մշակույթի մասն են կազմում եւ դրանց նպատակը միայն անբարենպաստ զարգացումների վերաբերյալ եղած մոտեցումները ներկայացնելը չէ: Ունենալով որոշակի տեղեկատվական-հոգեբանական ենթատեքստ՝ դրանք բարձրացնում են հանրության «զգոնությունը» եւ այդպիսով նվազեցնում նույն «վատ» սցենարների իրականացման հավանականությունը: Սակայն համաշխարհային տնտեսական համակարգի փլուզման վերաբերյալ ապոկալիպտիկ կանխատեսումների թիվն աննախադեպ աճել է (ինտերնետում դրանք տիրաժավորված են միլիոններով), ինչը տվյալ պարագայում արդեն նպաստում է հոռետեսական սցենարների իրականություն դառնալուն:

Ընդգծենք, որ Արեւմուտքի քաղաքական լիդերները՝ Օբաման, Մերկելը եւ Սարկոզին, կարծես թե անում են ամեն ինչ՝ ստեղծված իրադրությունը փրկելու համար: Սակայն նրանց ջանքերը նպատակ ունեն ընդամենը մասնակի շտկելու իրավիճակը՝ մնալով ներկայի տնտեսական համակարգի սահմաններում: Այլ խոսքերով՝ «փրկման» լայնածավալ ծրագրերը մարտավարական բնույթի են, իսկ ռազմավարական հեռանկարը բավական մշուշոտ է:

Եթե ներկայացված գործոնների համատեքստում դիտարկենք 2011-ի հասարակական զարգացումները, ապա առանձնահատուկ ուշադրության է արժանի «Գրավիր Ուոլ-սթրիթը» (Occupy Wall-Street. OWS) «հակակապիտալիստական շարժումը», որի մասնակիցները նպատակադրվել են «մերկացնել» եւ «տապալել» ներկայի «անարդարացի կապիտալիստական համակարգը»: Այսինքն՝ շարժումը, ի տարբերություն բողոքի այլ ակցիաների, ոչ թե մասնակի խնդիր է հետապնդում, այլ ուղղված է «զլորբալ տնտեսական համակարգի» դեմ: Ինչպես պնդում են գործընթացին հետեւող արեւմտյան մեկնաբանները, շարժումը ժլատ է լուսաբանվում ՋԼՄ-ում. այդ իսկ պատճառով ներկայացնենք որոշ փաստագրական տվյալներ:

«Փրկեք մեր հոգիները»

Ամեն ինչ սկսվեց ս.թ. հունիսի 9-ին, երբ շահույթ չհետապնդող կանադական Adbusters Media Foundation կազմակերպությունը, որը հանդես է գալիս «սպառողականության» («կոնսյումերիզմի»), գլոբալիզմի,

շրջակա միջավայրի աղտոտման դեմ եւ նախաձեռնել է «Օր առանց առեւտրի», «Շաբաթ առանց հեռուստատեսության» հասարակական շարժումները, գրանցեց occupywallstreet.org դոմենը: Հատկանշական է, որ այդ հիմնադրամը նաեւ «հոգեւոր մաքրության» ջատագով է, եւ ստեղծված իրավիճակում OWS կոչը շատերն ընկալում են որպես յուրովի SOS՝ «փրկեք մեր հոգիները»: Արդեն հուլիսի 13-ին հիմնադրամն իր ամսագրի եւ կայքի միջոցով սկսում է հորդորել՝ կազմակերպել բողոքի ակցիաներ եւ «խաղաղ եղանակով» գրավել համաշխարհային բիզնեսի խորհրդանիշը՝ Ուոլ-սթրիթը: Նախնական հավաքույթներից հետո, սեպտեմբերի 17-ին, այդ փողոցին կից հրապարակում տեղի է ունենում առաջին լայնածավալ հանրահավաքը: Հոկտեմբերի 15-ի ցույցին մասնակցում էր արդեն 150 հազար մարդ՝ աշխարհի 82 երկրում եւ 950 քաղաքում:

Ինչպես հայտնի է, 20-րդ դարի սկզբի մարքսիստների հիմնախնդիրներից էր հեղափոխական գաղափարների տարածումը: Խորհրդային գրականությունում կարելի էր հանդիպել «Իսկրայի» կամ «Պրավդայի» կոնսպիրատիվ նկուղային տպագրատների կամ ժանդարմերիայի կողմից բռնաբերված մամուլը տարածողների ձեռքակալման նկարներ: Այսօր իրողություններն այլ են. ինտերնետը սկզբունքորեն լուծել է կապի ու տեղեկատվության տարածման խնդիրները: Այլ է նաեւ «հեղափոխականների» սոցիալական պատկանելությունը. «պրուլետարիատին» փոխարինել է սոցիալական ցանցերում ընդգրկված ուսյալ-կրթյալ երիտասարդությունը, եւ հայտնի հեղափոխական կոչը կարելի է վերածնունդի կերպով որպես «Ֆեյսբուքերներ բոլոր երկրների, միացե՛ք»:

Կախված աշխարհագրությունից՝ կարգախոսներում «Ուոլ-սթրիթը» փոխարինվում է «Օքլենդով», «Լոնդոնով» եւ անգամ «Իսլամաբադով», սակայն անփոփոխ է մնում դրանց բովանդակությունը: Ավելորդ չէ նշել իրանական հանրության յուրօրինակ «ճկունությունն» այս հարցում. «Թեհրանի գրավումն» ընթանում է ԱՄՆ շահերը ներկայացնող Շվեյցարիայի դեսպանատան դիմաց, եւ «Կորչի՛ կապիտալիզմը» պաստառներով զինված ցուցարարները մեղադրում են ամերիկյան ղեկավարությանը «սադրանքներ կազմակերպելու» եւ Իրանի «ներքին գործերին խառնվելու» մեջ:

Շարժումը, որին այսօր միացել են բազմաթիվ հասարակական կազմակերպություններ եւ արհմիություններ, մեծ աշխուժություն է առաջացրել առաջին հերթին բուն Միացյալ Նահանգներում: Ցուցարարներին իրենց համերաշխությունն են հայտնում բազմաթիվ գրողներ (օրինակ՝ հանրահայտ Սալման Ռուշդին), երգիչներ (որոնց թվում է 60-ականների աստղ Փիթ Սիգերը) եւ մուլտիմիլիարդատերեր (ի դեմս Ջորջ Սորոսի): Նյու

Յորքի փողոցներ դուրս եկան անգամ «շարքային միլիոնատերերը», որոնք պահանջում էին «իրենցից ավելի շատ հարկեր գանձել»: CBS հեռուստակայանի եւ The New York Times-ի համատեղ հարցման արդյունքներով՝ ամերիկացիների 43%-ը ողջունում է շարժումը (դեմ է ընդամենը 27%-ը): Կողմնակիցների մեծ մասը կազմում են 18-29 տարեկան երիտասարդները եւ Դեմոկրատական կուսակցության համակիրները: Համաձայն մեկ այլ հարցման (իրագործել է Rasmussen Reports սոցիոլոգիական ընկերությունը)՝ ամերիկացիների 79%-ը կողմ է բողոքի հիմնական կարգախոսներից մեկին՝ «խոշոր բանկերին օգնեցիք, իսկ մեզ թողեցիք անպաշտպան»:

Ոստիկանները երբեմն չհիմնավորված ձեւով կոշտ են միջամտում OWS-ի հետ կապված իրադարձություններին, ինչը մեկնաբանները պայմանավորում են նաեւ նրանով, որ «կապիտալիստական համակարգի հիմնական պատասխանատուներից» մեկը՝ JP Morgan բանկային խումբը, Նյու Յորքի ոստիկանությանը նվիրաբերել է \$4.6 մլն: Ի պատասխան շարժման՝ «ուժային բլոկը»՝ հաքերային հայտնի Anonimous խումբը (արդի «հեղափոխական զինյալները»), հարձակումներ է կազմակերպում բորսաների եւ բանկերի էլեկտրոնային համակարգերի վրա:

Հնարավոր սցենարներ

Դեռեւս 1990-ականներին ԿՀՎ-ն սահմանել էր այն հիմնական կանխանշանները, որոնք վկայում են «հեղափոխական իրադրության» մասին: Դրանք են. տվյալ երկրում հարուստների եւ աղքատների միջեւ գոյացած մեծ խզումը, «միջին խավի» անհետացումն ու դժգոհների՝ «նեղացածների» թվի մեծացումը: Վերլուծաբանների մի մասը համարում է, որ այդ բոլոր կանխանշաններն այսօր առկա են ԱՄՆ-ում, իսկ OWS-ն մոտալուտ հեղափոխության ազդարարն է: Անգամ զուգահեռներ են անցկացվում արեւմտյան «հակակապիտալիստական» գործընթացների եւ «արաբական հեղափոխությունների» միջեւ: Ուշադրության արժանի են նաեւ այն մոտեցումները, համաձայն որոնց՝ նախագահական ընտրությունների շեմին OWS-ն ծայրահեղական միջոցներով աջակցում է Բարաք Օբամայի եւ դեմոկրատների քաղաքական-տնտեսական ծրագրերին: Վերջապես, մեկնաբանների մեկ այլ խումբ նախապատվությունը տալիս է այն վարկածին, թե OWS-ն կազմակերպել են հենց իրենք՝ «կապիտալիզմի շնաձկները» եւ հատուկ ծառայությունները, հասարակությունում կուտակված դժգոհություններն «անվնաս ձեւով պարպելու» նպատակով:

Ներկայացված մոտեցումները, թերեւս, այս կամ այն չափով արտահայտում են ներկայիս իրողությունները: Տնտեսական համակարգի

Ճգնաժամի արդյունքում այսօր ԿՀՎ մշակած «հեղափոխության կանխանշաններն» իրոք բնորոշ եւ ակտուալ են ոչ միայն ամերիկյան, այլեւ շատ այլ հանրությունների համար: Այսինքն՝ պետք է փաստել, որ դժգոհության ալիքի բարձրացումն օբյեկտիվ բնույթ է կրում, եւ որ այդ ալիքին են միացել նաեւ նրանք, որոնց կարծիքով՝ դժվարությունները ոչ թե զուտ տնտեսական են, այլ կրում են ավելի խորքային բնույթ եւ բխում են արդի «կապիտալիստական» համակարգի արժեքային-փիլիսոփայական համակարգից:

Միեւնույն ժամանակ, «հեղափոխական զարգացումների» հեռանկարների տեսակետից սկզբունքորեն դժվար է համադրել ԱՄՆ-ը կամ առաջատար արեւմտյան պետություններն այն երկրների հետ, որտեղ տեղի են ունեցել հեղափոխություններ: Այդ համատեքստում տեղին է հիշել Ա.Թոյնբիի այն միտքը, թե Արեւմուտքի ամենակարեւոր գաղտնիքը տեխնոլոգիաներն են, որոնք նա խստորեն թաքցնում է ուրիշներից: Առայսօր արեւմտյան երկրներն իրենց գիտակրթական, ռազմաքաղաքական, տնտեսական, կազմակերպչական եւ այլ ոլորտների տեխնոլոգիաներով զգալիորեն գերազանցում են մնացյալ աշխարհին: Այսինքն՝ ԱՄՆ-ը եւ Եվրոպան ունեն այն ռեսուրսները (կամ տեխնոլոգիաները), որոնք ամենայն հավանականությամբ, զոհե տեսանելի ապագայում, թույլ կտան նրանց խուսափել դեստրուկտիվ «հեղափոխական սցենարներից»: Մասնավորապես, դրա վկայությունն են նույն ԿՀՎ վաղօրոք կատարած մշակումները եւ ամերիկյան ընտրանու առնվազն մի զգալի մասի լուրջ եւ ադեկվատ վերաբերմունքը OWS-ի հետ կապված գործընթացներին: Ըստ Global Media Reaserch Center-ի հիմնադիր Ջոն Դաունհինգի, շարժումը «ուղեցույց է բոլոր նրանց համար, ովքեր ձգտում են վերակառուցել համաշխարհային տնտեսությունը»:

Միաժամանակ, չի կարելի անհիմն համարել այն վարկածը, թե OWS-ն անուղղակիորեն սպասարկում է ներկա նախագահի եւ դեմոկրատների նախընտրական քաղաքական, տնտեսական ծրագրերը: Սակայն այստեղ, ըստ մեզ, ավելի շուտ կարելի է խոսել ոչ թե հատուկ նախընտրական տեխնոլոգիաների (լիովին չբացառելով նման տարբերակը), այլ, ավելի շուտ, ուղղվածությունների համընկնման մասին, որից փորձում է իրական քաղաքական օգուտներ քաղել Օբամայի վարչակազմը: Հարկ է նկատել, որ այս ամռանն ամերիկյան պարտքերի եւ դեֆոլտի հետ կապված հայտնի գործընթացներում հենց կորպորատիվ գերշահույթների դեմ էր ուղղված նախագահի առաջարկությունների մի զգալի մասը, որոնք կտրուկ մերժեցին հանրապետականները: Հայտնի է նաեւ, որ ԱՄՆ գաղափարախոսական համակարգի թերություններից է

սոցիալիստական կոնցեպտի բացակայությունը, որը հավասարակշռում է ծայրահեղ ազատական մոտեցումները (ինչպես դա տեղի է ունենում, օրինակ, Մեծ Բրիտանիայում): Չի կարելի բացառել, որ OWS շարժումը կարող է դուրս գալ «փողոցային» ձեւաչափից եւ յուրովի սոցիալիստական կոմպոնենտի տեսքով ներմուծվել նույն դեմոկրատական կուսակցություն կամ անգամ կայանալ որպես նոր քաղաքական ուժ:

Բոլոր պարագաներում, կարելի է փաստել հետեւյալը: Թափ հավաքող OWS շարժումն արտահայտում է օբյեկտիվ իրողություններն ու իրական դժգոհությունները եւ այդպիսով դարձել է հասարակական-քաղաքական գործոն: Ակնհայտ է, որ նման շարժումը չի կարող դուրս մնալ քաղաքական-վարչական ուժերի, հատուկ ծառայությունների եւ խոշոր կապիտալի ուշադրությունից, որոնք փորձելու են (առանձին-առանձին կամ համատեղ) կառավարելի դարձնել այն, ձգտել ուղղել հօգուտ իրենց շահերի կամ առնվազն վնասագերծել հնարավոր ռիսկերը:

Հնարավոր է, որ նման համատեղ գործողությունների արդյունքում գտնվեն համաշխարհային տնտեսական, կապիտալիստական համակարգի վերակառուցման եւ առողջացման դեղատոմսերը: Ամենեւին չի կարելի բացառել երկրորդ սցենարը, ըստ որի՝ այս կամ այն ուժերի ներգործության արդյունքում OWS-ն կնարգինալացվի ու կվերածվի «հակազլոբալիստական շարժման» մասի՝ ի լրումն տրոցկիստների, անարխիստների եւ այլոց: Այդ պարագայում նրանք G8-ի կամ G20-ի առիթով կմեծացնեն ավերված «Մակրոնալոսների» թիվը եւ ոչ ավելին: Միեւնույն ժամանակ, սցենարային մշակումների մեթոդաբանությունը ենթադրում է նաեւ «ծայրահեղ վատ» ու ֆանտաստիկ թվացող զարգացումների քննարկում: Այս համատեքստում կարելի է դիտարկել տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով գլոբալ մեգահեղափոխության իրագործումը, որն, անշուշտ, կհանգեցնի շատ ավելի մեծ խնդիրների, քան դրանք առկա են այսօր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ. ՄԵՐ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ	1
Ռուբեն Մելքոնյան	
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ	
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ	7
Հայկ Գաբրիելյան	
ԹՈՒՐՔԻԱ – ԱՄՆ ՌԱԶՄԱԿԱՆ	
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	11
Սեւակ Սարուխանյան	
ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ	16
Արտաշես Տեր-Հարությունյան	
ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆԻ ՇՈՒՐՋ ԱՃՈՒՄ Է	21
Բենիամին Պողոսյան	
ԱՄԵՐԻԿՅԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆՆԵՐՆ	
ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ	27
Արաքս Փաշայան	
ԻՍԼԱՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ	
ՀԵՏՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ	31
Ալեքսեյ Պողոցերոբ	
«ԼԻԲԵՐԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ ՏԱՊԱԼՎԵՑ	
ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՈՂՄԻՑ»	37
Գագիկ Տերտերյան	
«ԳՐԱՎԻՐ ՈՒՈԼ-ՍԹՐԻԹԸ»	42

Շապիկին պատկերված է
Արագածը Գեղամա լեռնաշղթայից

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՍՍ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: